

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

« ԱՏԵՆ ԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԵՎ ՅՈՒՆ 1881 ԱՄՆԵՆ

Ն Ի Ս Տ

25 ՅՈՒՆԻՍ 1881



Կ. ՊՈԼԵՍ

1881

**ԴԻԻԱՆ Բ ԱԶԻԱՅԻՆ ԺՈՂՈՂՈՅ**

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Յ. Մէրեւէմ-Գուլի էֆէնտի	Ա. Արեւադէր
Առաքել էֆէնտի Ալթուն Տիւրքի	Բ. »
Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան	Գ. »
Միհրան էֆէնտի Զօպանեան	Ա. Արեւադէր
Նշան էֆէնտի Պոյաճեան	Բ. »
Տիգրան էֆէնտի Հիւնքեարպէ յէնտեան	Գ. »

Ձեռնասուրբեան դիւան

Տ. Մատթէոս եպիս. Իզմիրլեան  
Տ Գէորգ Մ. Վարդ. Բուսճուղլեան  
Պապի էֆէնտի Պապօեան

Դաստիակութեան դիւան

Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան  
Լէւոն էֆէնտի Դափամաճեան  
Դասպար էֆէնտի Զերազ

Կարուածոց դիւան

Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան  
Աբրահամ էֆէնտի Մուրատեան  
Մատթէոս էֆէնտի Ալիքսանեան

Համարակալութեան դիւան

Յակոբ էֆէնտի Արչակ  
Ստեփան էֆէնտի Փափազեան  
Յակոբ էֆէնտի Հաճեան

Յարաբերութեան դիւան

Յարութիւն էֆէնտի Նորատունկեան  
Ալիքսան էֆէնտի Խօրասանճեան  
Ղազար էֆէնտի Հովուեան

Իրաւասութեան դիւան

Եղիշէ վարդապետ Ա. յվաղեան  
Գառնիկ էֆէնտի Յովակիմեան  
Աւետիս էֆէնտի Պէշիրեան

Նախաձեռնութեան դիւան

Առաքել էֆէնտի Ալթուն—Տիւրքի  
Նշան էֆէնտի Պոյաճեան  
Յովհաննէս էֆէնտի Թորոսեան

Խմբագրութեան դիւան

Կարապետ էֆէնտի Խլթիւճեան  
Աւետիս էֆէնտի Սուրէնեան  
Մկրտիչ էֆէնտի Մէղպուրեան

Ելեւմտից յանձնախումբ

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՂ**

ԲԱՅՈՒՄ 1881 ԱՄՅ

**Ն Ի Ս Տ Դ.**

25 ՅՈՒՆԻՍ 1881

ՆՈՒՅՄԱՀ. — Սրբազան Պատրիարք Հայր

ԱՏԵՆԱՊԵՏ. — Յարութիւն էֆէնտի Մէրեւէմ-Գուլի

**ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԸՆՔ**

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԸՆՔ	ԵՍՏՈՐՆԵՐ	
Ա. Վիճակ	( Ա. Վիճակ )	
1 Կարապետ եպս. Սերոբեան Բ	Գումգաբու, Կետիկ վաշա	47 Իսկիւտար Ս. Կարապետ
2 Սիմօն եպս. Սէֆէրեան Բ	Եւ. Գումգաբուի դուրս	48
3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ Պ	21 Գրիգոր Պէրպէրեան Բ	49 Միհրան Պանճէղափուլն Բ
4 Կարապետ Ք. Սէթեան	22 Կարապետ Ազարգճաճեան	50 Պօղոս Թորգոմեան Բ Պ
	23 Համբարձում Մաղպուղեան	51 Տրդատ Փափազեան Բ
	24 Մինաս Գափամաճեան	52 Յակոբ Հաճեան Բ
	25 Սարգիս Ազարէկեան Բ Պ	( Գ. Վիճակ )
5 Մատթէոս եպս. Իզմիրլեան	26 Սենեքերիմ Մանուկեան	Գասքմ բաշա
6 Պօղոս Վ. Խօրատունեան Բ Պ	27 Բարթող Քիւրքճիւղաշեան Բ	53 Գասպար Զերազ Բ 2
7 Յովհաննէս Ք. Մկրտեան	28 Գէորգ Ապտալլաճեան Բ Պ	Բէրա
8 Գրիգոր » Աճէմեան Բ	29 Յ. Մէրեւէմ-Գուլի	54 Արիկ Ունճեան Բ 3
	30 Տիգրան Հիւնքեարպէ յէնտե. Բ Պ	55 Գրիգոր Սէլիմլէճեան
	31 Աւետիս Սուրէնեան	56 Գրիգոր Օտեան Բ Պ
	32 Տօքթ. Յ. Թիրեաքեան	57 Ղազար Հովուեան
	33	58 Յարութիւն Նորատունկե. Բ
	34	59 Յարութիւն Պէկեան
	35	60 Նշան Պոյճեան
	36	61 Վիշէն Օրմանեան
	37	62 Տէլէմաք Էքսէրճեան
	( Բ. Վիճակ )	Միջագիւղ
	Պէշիկբաշ	65 Յակոբ Պ. Նորատունկ
	38 Ալիքսան Խօրատունեան Բ Պ	67 Տիգրան Երեսուֆեան Բ Պ
	39 Բարսեղ Հալաճեան	65 Մկրտիչ Գաղանճեան Բ
	40 Յովհաննէս Քէրէտէճեան	66
	Եւ. Վիճակ	67
	41 Լեւոն Գարամաճեան Բ	Պէյգօզ Եւ. Ղալաբիա
	42 Մարուգէ Յրէնկեան Բ Պ	56 Միքայէլ Մամիկոնեան
	43 Պօղոս Էքսէրճեան	( Գ. Վիճակ )
	44	Բուզիւնուճուգ Եւ. Իսապիէ
	Իսկիւտար Ս. Խաչ	70 Գրիգոր Ներսէսեան
	45 Սիմօն Յէլէկեան	70 Մկրտիչ Մէղպուրեան
	46 Տօքթօր Յ. Շիշմանեան Բ Պ	

Բ. Բացակայութիւն առաջին  
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ  
Բ. Պ Բացակայութիւն երրորդ



Գատըզիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Գառնիկ Յովակիմեան	Կարին	121 Ստեփան փառազեան
72 Կարապետ Հազարեան	101 Սերոբէ Ազնաւորեան	Տիվրիկ
Նարլըզաբու	Քեօբանէա	122 Նշան Գարազու
73		Զէյրուն Է. Մարաշ
Եկեղիմահայիկ Սամարիոյ	102	123
74	Անդրիանուպօլիս	Տրապիզօն
Թօփագալու	103 Յակօք Պարոնեան	
75 Տ. Կ. Հիւնքեարպէյնեան	ավրիկիլիա	124 Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա Է. Ս.	104 Կարապետ Ս. Իւթիւճեան	125 Մելքօն Իսկէնտէրեան Բ 3
Աստուածածին	Ակն	Տիգրանակերտ
76	105	126 Միհրան Զօլանեան
Գուրուչեշմէ	Ղարանիսար	Վան
77 Համբարձում Իրէքճեան	106	127
Հիսար Է. Պօյաճի զիւղ	Աբաբկիր	Աղբամար
78 Սենեքերիմ Կիւլպէնկեան	107 Կարապետ Խաչիկեան	128
Նոր զիւղ Է. Սրէնիա	Բաղէշ	Հայեպ Է. Այնքապ
79	108	129
Պայատ	Պրուսա	Սեբաստիա
80 Սահակ Ղազարոսեան	109 Գրիստոստուր Ղազարոսեան	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
81 Տիգրան Բարաղամեան	Եղոկիլիա	Ռուսճուգ
82 Մկրտիչ Կիւմիւշեան	140	131
Քարակեօմրիկ	Ամասիա	Կարս
83 Յովհաննէս Թորոսեան	141 Համբարձում Ալաճաճեան Բ	132 Աբրահամ Յ. Այվազեան
84 Կարապետ Փանոսեան	Բայու	Զմշկաձագ
( Ե. Վիճակ )	142 Յովհաննէս Ազնաւորեան Բ 2	133
Սամարիա	Եղեսիա	Գաղատիա
85 Ալիքսան Ալիբեան	143 Յակօք Իւթիւճեան	134
86 Եղիազար Մէլիքեան Բ Պ	Մանճըլըլս	Ատանա
87 Մինաս Ճաֆճաֆեան Բ 2	144	135
88 Նազարէթ Շահպաղեան	Հաճըն	Սղերղ
89 Յարութիւն Թիւլեան Բ 2	145	136 Մատթէոս Ալէքսանեան
90 Յակօք Արշակ	Երզնկա	Եօզրատ
91 Սեպուհ Թիւլսիւղեան	146 Ռէթէոս Պէրպէրեան	137 Լօղօֆէթ Պալեօղեան Բ Պ
92 Մինաս Էմիրեան	Թեքիրտաղ	Մայրիա
93 Վիչէն Գապառաճեան	147 Տիգրան Գ. Սինանեան Բ	138 Գէորգ Վարդանեան Բ 2
94 Թաղուոր Էրկանեան	Կեսարիա	Իզմիր
Խասգիւղ	148 Գէորգ Գըլքճճեան Բ	139 Պապի Պապօեան
95 Առաքել Ալթուն Տիւրքի Բ Պ	Խարբէրղ	Եգիպտոս
96 Ռէթէոս Պէլիկճեան	149	140 Աբրահամ Մուրատեան
97 Սարգիս Քալուքճեան Բ Պ	Պայքիսէր	
98 Ռէթէոս Թաղէոսեան		
99 Ռուբէն Պուլիուրեան Բ		
400	120	

# Օ Ր Ե Կ Ե Ր Գ

- Ա. Տեղեկագիրք Երեսփոխանական նորոգ ընտրութեանց .
- Բ. Հաշուեկշիռ կեդրոնական անտուկի 1880—81 ամի .
- Գ. Երագիր թաղային մատակարարութեան օրինաց . — Շարունակութիւն վիճարանութեան ի վերայ տեղեկագրի Ատենապետաց Դիւանի :

Քնդ Նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Զօր, Ատենապետ Էֆէնտի ատենը կը բանայ ժամն 3 ին , ի ներկայութեան 52 Երեսփոխանաց, որոց վերջին թիւը 67 ի կը յանդի :

## ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

4 .  
Վաւերացումն նախընթաց շրջանի ժթ. Է. Ի. նիստերու ատենագրութեանց .  
ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Նախընթաց շրջանի ժթ. և Ի. նիստերու տարագիր ատենագրու-

թիւնք ցրուած են արդէն Երեսփոխանաց , և միայն ԻԱ. վերջին նիստինը Յնացած է , որ տա այն կցելի տեղեկագրաց և կրթական ծրրագրին ընդարձակութեան պատճառաւ յստազած է դուրս գալ տարանէն Արդ' նախ ժթ. նստի ատենագրութիւնը ժողովոյդ վաւերացմանը կենթարկեմ , և եթէ զխոտղութիւն ունեցողներ կան , կը հրաւիրեմ գիրենք խօսք ատենու :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՅ. — Ատենապետ Էֆէնտի. ժՁ. նստին Էս Ատենապետ էի, 5 Երեսփոխանաց կողմանէ բարեփոխում մը ներկայացու նախկին Նախաձեռնութեան Դիւանի տեղեկագրոյն եզրակացութեան վրայ , [ Տե՛ս

երես 394 սիւն Բ. ] որոյ նկատմամբ կարծիքները բաժնուեցան, և Չեր Մեծութիւնն ալ նոյն բարեփոխման հաւանեցաւ և անոր գործնական հետեանը բացատրելով կարծիքներն հաշտեցուց : Եւ Չեր սոյն բացատրութեան վրայ քուէի դրուելով բարեփոխումը նոյնութեամբ ընդունուեցաւ, ինչպէս գիտած է Փափաղեան էֆէնտի ԺԹ. նախն մէջ, երբ ԺԶ. նախի ատենագրութիւնն ընդունելութեան է դրուեր, և իմ բացակայութեան պատճառաւ այդ կէտն յետաձգուեր է, իմ բացատրութիւնն ըսելու համար :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Ուրեմն կը յայտարարէք թէ քուէարկութիւնը ճշգրիտ արձանագրուած չէ ատենագրութեան մէջ, վասն զի ինչպէս Փափաղեան էֆէնտի գիտած էր՝ բարեփոխումը նոյնութեամբ ընդունուած է ժողովն :

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ.** — Այո՛, Ատենապետ էֆէնտի, նոյն օրուան Չեր բացատրութեան համեմատ՝ նոյնութեամբ քուէի գրած եմ բարեփոխումը :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — ԺԹ. նախի ատենագրութեան վրայ զիտողութիւն ունեցող կա՞յ, ուրիշ :

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.** — Մի քանի զիտողութիւններ ունիմ : Թէև պատրաստուած չէինք խօսելու, զի վերջին ատենագրութիւնն հասած չբարձրով, կը կարծէինք թէ ամենքն ի միասին ընդունելութեան պիտի գրուէին :

Երես 464 սիւնակ Բ. — Երբ Արքայան Նախագահն ըսաւ թէ « իմ խօսքերուս իմաստը բոլորովին այլափոխեալ է. բերանս այնպիսի խօսքեր կան դրուած զորս ես չըսի և սակայն չեմ յիշեր հիմայ », ըսի ես. « Սըբ. բազան, Չեր ո՞ր խօսքին իմաստն այլափոխեալ է և ո՞ր խօսքերն զորս չէք ըսած, պէտք է ճշգրէք » : Իմ այս խօսքս չէ արձանագրուած : Ասկէ զատ Համարակալութեան Գիւանին

զիր մ'եկած էր, որոյ մասին որչափ մ'եղաւ. կամ ես սխալ հասկցած եմ այդ որչափը, կամ սխալ արձանագրուած է. (Տես երես 473 սիւնակ Ա.) : Համարակալութեան Գիւանն ըսած էր թէ՛ իւր նախորդական պաշտօնը կատարելու ատեն բացատրութեանց պէտք պիտի ունենար, ուստի և չէր կրնար քննութիւն ընել այնպիսի հաշտեցոյցերու վրայ որոյ պատասխանատու մարմինը չէր երևէր : Ուստի ինձ կը թախի թէ քուէի գրուած բանաձեւը սխալ արձանագրուած է, և թէ այդ բանաձեւը պիտի լինի՝ « Յանձնարարել Վարչութեան որ նախորդ Վարչութեանց ստորագրել տայ իրենց պաշտօնավարութեան ժամանակին հաշտեցոյցերն և զայնս ստորագրեալ ներկայէ Համարակալութեան Գիւանին ի քննութիւն » : Եւ հիմայ ալ իրր Համարակալութեան Գիւանի անդամ կրնամ առաջարկել զայս կրկին :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Փափաղեան էֆէնտի վերջին զիտողութեան համար բացատրութիւն մը առ չարի է : Ես կը յիշեմ որ քուէի գրուած այդ բանաձեւը ճիշդ է, սա պատճառաւ որ՝ նախկին Վարչութեան անդամը կրնային զրոնալ ստորագրել զայնս. ուստի Համարակալութեան Գիւանն իւր քննութիւնը շարունակելու պայմանաւ՝ հրախրել յանձնարարուեցաւ նախորդ Վարչութիւններն որ իւրեանց ժամանակի հաշտեցոյցերն ստորագրեն :

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.** — [Ընդմիջելով] Բոյց այդ սխալ է :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — [Շարունակելով] Այդ ստորագրեալ հաշտեցոյցերն ուղղակի հաս պիտի գային : Իսկ եթէ երբէք շատրագրէին, Համարակալութեան Գիւանը Արքայան Պատրիարք չոր հետ բանակցութեամբ առաջարկութիւն մը պիտի բերէր ժողովոյս :

**ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. ՄԱՏ. ԵՊԻՍ.** — Երես 483, սիւնակ Ա. « Վարչական ամեն ճիւղերուն համար մնաուկ կամ գումար յատկացուած է, իսկ կրօնական ճիւղին համար չկայ : » Այսպէս չեմ ըսած. իմ խօսքս էր՝ « 1860 էն այսինքն Սահմանագրութեան հաստատութենէն ի վեր, Եկեղեցականաց վիճակի բարուրման համար որ և է ձեռնարկութիւն չէ եղած : » Այս խօսքս չէ արձանագրուած :

ԺԹ. նախի ատենագրութեան վրայ զիտողութիւնը ստուգելով, Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ զայն՝ հանդերձ զիտողութեամբ՝ և ժողովը կ'ընդունի :

Ատենապետ էֆէնտին Ի. նախն ատենագրութեան վրայ ի զիտողութիւն կը հրաւիրէ զԵրեմիայանս :

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.** — Նիստ Ի. երես 500 սիւնակ Ա. — 1872 Մարտ 10 թուականաւ Խրիմեան Արքայան Պատրիարքին առ Վեհ. Գեորգ Կաթողիկոսն գրած նամակին մէկ պարբերութիւնը կարդացեր եմ, բոյց ատենագրութեան մէջ չէ անցեր : Ուստի պէտք է աստ արձանագրեմք, որ Կիլիկիոյ Կաթողիկոսական խնդրոյն էական մասն է. (Տես ատենագր. բացման 1870 ամին, թիւ ԽԳ. երես 664 սիւնակ Ա.) :

« Թէ՛ Ազգային Վարչութեանս և թէ՛ « Երեսմի. Ժողովոյ համար յարաբերութիւնը Կիլիկիոյ Կաթողիկոսին կողմանէ « ընդունուած կը համարուին, վասն զի « այն օրը՝ երբ Կիլիկիոյ Կաթողիկոսն իր « խոստմնագիրը դրժէ և սահմանելի « յարաբերութիւնը չ'ընդունի, և կամ « նոցա դէմ վարուի, անտարակոյս ամ. « բաստանութեան տակ կ'լինայ, և ի պա. « հանջել հարկին՝ մինչեւ անգամ կը « դադրի իր պաշտօնէն » :

**ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. ՄԱՏ. ԵՊԻՍ.** — Երես 500 սիւնակ Բ. — « Վարչութեան այս յայտարարութիւնը կրօնական պայմաններուն համար չեմ ընդունիր » չեմ ըսած, այլ « բաւական չէ » ըսած եմ :

Ի. նիստի ատենագրութեան վրայ ուրիշ զիտողութիւն չը լինելով, Ատենապետ էֆէնտին եղած զիտողութեամբը հանդերձ քուէի դրաւ զայն, զոր ժողովը կ'ընդունի :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Կը մնայ ԻԱ. նախի ատենագրութիւնն, որոյ չհասնելուն պատճառն ըսի : Կան նաև պատրաստ՝ նոր շրջանիս Ա. և Բ. նախերու ատենագրութիւնը. և թէ կուզէք զանոնք ալ վաւերացնեմք :

**ԶԱՅՆԵՐ** — Չեմք ստացած տակաւին :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Ուրեմն փակման նիստի ատենագրութեան հետ կը վաւերեմք զանոնք :

2.

Յացակայութիւնք

Ատենապետ էֆէնտի ծանուցանելով ժողովին թէ՛ Ազգ. Երեսփոխաններէն Ֆրէնկեան Մարուզէ և Առաքել Ալթուն-Տիւրքի էֆէնտիք՝ ճամբորդութեան պատճառաւ, և Մելիքեան Եղիազար, Խորասանճեան Ալիբան, Թորգոմեան Պողոս և Ապտուլլահեան Գեորգ էֆէնտիք՝ անձնական տկարութեան պատճառաւ, այսօրեայ նառն բացակայ կը գտնուին, նշանակել տուաւ ներկայութեան տուժարին մէջ այն օրինական բացակայութիւնները :

Եւ յարեց՝ որ թէպէտ Պուլտրեան Ռուբէն էֆէնտի ալ ստիպողական գործ մ'ունենալուն պատճառաւ այսօր բացակայ մնալը գրով յայտնած է Գիւանին, բոյց այս պատ-

ճանն օրինակուն չլինելով, Պուլիուրեան Էֆէնտին պարզապէս բացակայ կը նշանակուի ներկայութեան տուժարին մէջ :

3.

Գաւառներէն եկած կրթական Տեղեկագիրք .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիտէք թէ գաւառներէն դատարարակութեան վերաբերեալ տեղեկագիրք խնդրուած լինելով, մէկ քանի տեղէ եկած և Գատարարակութեան Գիւանին յղուած էին : Այս անգամ նմանօրինակ տեղեկագրեր ևս եկած են Ազրիանուպոլէն, Հաճընէն, Շապին-Գարաշիսարէն, Քէօթահայէն, Մալաթիան, Երզնկայէն, Արինէն, և դարձեալ Երզնկայի գիշերօթիկ վարժարանէն : Ասոնք ալ բնականորոպէս պիտի յղուին Գատարարակութեան Գիւանին, և ատենագրութեան մէջ պիտի անցնին :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Ինչպէս նախորդ գաւառական տեղեկագրերէն տեսանք և ինչպէս այս նոր տեղեկագրերէն ալ պիտի տեսնուի, սորա մասնակի տեղեկութիւններ միայն կրնան բերել, և այս սրտածառաւ իսկ անկարելոր է յղել զանոնք Գատարարակութեան Գիւանին : Ես այնպէս կը յիշեմ թէ երբ նախաքննիչ դիւանի կը յղուի առաջարկ մը կամ խնդիր մը, զայն նախաքննութեան բովէն անցընելու և նախաքննող դիւանին կարծիքն առնելու համար կը յղուի : Բայց այս գաւառներէն եկած կրթական տեղեկագիրք առաջարկներ չեն սրտաւանակեր, այլ սրտը տեղեկութիւններ : Ուստի կեզրակայնեմ որ այս տեղեկագիրք, ինչպէս նաև սակէ վերջը գալիքներն, յղուին նախ Վարչութեան, որպէս զի սա՛ մտնուելով բոլոր այդ մասնակի տեղե-

կութիւնն՝ Հայաստանի կրթական միջակին վրայ ընդհանուր տեղեկագիրք մը պատրաստէ, և այն տեղեկագիրքն յղուի Գատարարակութեան Գիւանին, որպէս զի այս վերջինն ալ կարող լինի կարծիք մը յայտնելու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսեցիր նախորդ շրջանի Գատարարակութեան Գիւանի Ատենագրութեան առաջարկն . եթէ ընդունուի, հարկ չը պիտի լինի Գատարարակութեան Գիւանին յղել այն տեղեկագրերն :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. [ Կրթական Խորհրդակցանք ] . — Իրաւացի է Պէրպլեան Էֆէնտիի ըսածն, ևս ալ համամտ եմ իրեն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Յաւալի է որ գաւառներէն երկու տարի առաջ խնդրուած տեղեկագրերն դեռ նոր կուգան Ժողովոյս : Ասկէ առաջ մի քանի գաւառներէ եկած տեղեկագրեր, զորս յղեցինք Գատարարակութեան Գիւանին :

Մեր այս տեղեկագրերն ուղեցինք տեսնելու համար թէ գաւառներն ի՞նչպէս կաշխատին դատարարակութեան մասին Բայց երբ այսպէս տարիներով յապաղեն, ոչինչ օգուտ կրնամք բաղել այս աշխատութեանէն : Եթէ Ազգ. Ժողովոյս կողմէ այդ տեղեկագրերը խնդրուած ատեն այս աստիճան անհագութիւն և յապաղում տեղի կունենայ, արդեօք Վարչութեան կողմէ ուղուած գործերն ս՞րջափ կը յապաղին գաւառացի մէջ :

Իսկ արդ քանի որ Պէրպլեան Էֆէնտի կառավարիչ նախապէս Վարչութեան յղել այդ տեղեկագրերն, մեր ալ կընդունիմք, միայն զիտնալ պէտք է թէ՛ Կրթական Խորհրդակցանքէն քանի՞ տարիէն պիտի բերէ առաջարկեալ ընդհանուր տեղեկագիրքն, որպէս զի մեր ալ հասկնամք թէ գաւառացի մէջ դատարարակութիւնն ի՞նչ վիճակ ունի :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. ( Կրթական Խորհրդակցանք ) . — Պատասխանելու համար Փափաղեան Էֆէնտիի, կը յիշեցնեմ թէ կրթական ծրագիրը վերաքննելու համար Ժողովս մէկ ամիս պայմանաժամ տուաւ Ատենագրաց Գիւանին, բայց տակաւին չվերադարձաւ այդ ծրագիրն . չգիտեմք թէ տակաւին մինչև ե՞րբ մեր գործոց արդէր պիտի լինի այս յարողումն և մեր այսպէս անգործ պիտի նըստիմք : Ես պիտի ըսեմ թէ Փափաղեան Էֆէնտիի միտմանակ կատակածներ ընելու մեր վրայ, եթէ պարզապէս կրթական ծրագրին վաճառումն առաջարկէր, Կրթական Տեսչութիւնն ալ իրեն սրտականեալ գործոց մէջ աւելի մտնութով գործելու պարտաւոր կը լինէր :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Կը տեսնեմ որ պարտաճանաչութեան մասին կը խօսուի : Բընական է թէ այս Ժողովն հայելի մ'է իրմէ անորոգասեալ Ժողովներուն, և իւր գործելու կերպն մեծ ազդեցութիւն ունի նոցա վրայ : Երկու անգամ է Ժողովոյս նիստերուն համար հրախրագիր կատանամ, որոց մէջ բացման ժամ նշանակուած է ճիշդ 2 1/2, բայց աստիճանն զամուսն 3 1/2 ին, երկրորդ անգամուսն 3 ը հինգ անցած բացուեցաւ Ժողովը : Եթէ կեզրունն այս աստիճան անհոգ լինի ճշգրտաբանութեան, գաւառներէն և Վարչութեանէն ի՞նչ աստիճան ճշգրտութիւն կարող եմք պահանջել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէ՛ Փափաղեան Էֆէնտիի և թէ՛ Կրթական Խորհրդակցանքի Էֆէնտիի ըրած զիտողութիւնքն՝ կը հասկընամ որ ազգասիրական եռանդէ կը ծագին . սակայն պէտք է զիտնան այս երկու բարեկամներս որ երկուքն ալ շատ յառաջ գացին :

Փափաղեան Էֆէնտիին գործին յապաղելէն նեղուելով խօսեցաւ, բայց իրաւունք չունէր արագոց յապաղում մ'ալ եմք ազդելով, զայն Կրթական Խորհրդակցանքի Էֆէնտիին վերադարձու : Իսկ Կրթական Խորհրդակցանքէն

Ֆէնտիին պէտք է յիշէ որ Ատենագրաց Գիւանը սովորականէն շատ աւելի լայն է և ևս ունի ի գործ զրուս կրթական ծրագրին նախաքննութիւնը կատարելու համար, որ վաղուց եկած պիտի լինէր Ժողովս եթէ սուրբութեան և Ատենագրաց Գիւանին կամբէն անկախ ուրիշ պատճառներ չյայտնուէին զայն : Եւ եթէ Կրթական Տեսչութիւնն այդքան չուսով կուզէր տեսնել իւր ծրագրին վաւերացումն, կրնար նուազ ստուար սրտաբատել զայն, և դիւրաւ հասկերպիլ բարեփոխմանց : Մանաւանդ որ եթէ բարեփոխեալ ծրագրին եկած ալ լինէր Ժողովոյս, բայց թաղային օրինաց ծրագրոյն ուարտմանն սուրաւոր, միթէ Կրթական Տեսչութիւնն անգործ պիտի նստէր :

Արդ՝ գառնալով խնդրոյն՝ Պէրպլեան Էֆէնտիի առաջարկը քուէի պիտի դնեմ, որոչելու համար թէ գաւառներէն եկած կրթական տեղեկագրերը նախապէս Վարչութեան յղել կուզէ Ժողովը, թէ՛ ըստ առաջնայն՝ Գատարարակութեան Գիւանին :

ՁԱՅՆԵՐ. — Քուէ՛, քուէ՛ :

Ատենագրաց Էֆէնտիին քուէի դնելով Պէրպլեան Էֆէնտիի առաջարկն, Ժողովը մեծամասնութեամբ ՈՐՈՇԵՑ յղել Վարչութեան գաւառներէն եկած կրթական տեղեկագրերն, որպէս զի գաւառացի կրթական միջակին վրայ ընդհանուր տեղեկագիրք մը պատրաստուի, ի ձեռն Կրթական Տեսչութեան, և Ժողովոյս մատուցուի :

4.

Հարցում առ Ս. Պատրիարքն, Մ. Գափամաճեան Էֆէնտիի կողմանէ, Աղբամարայ Կարողիկոսական խնդրոյն ցկատմամբ .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գափամաճեան Մինաս Էֆէնտիի կողմանէ առ Ս. Պատրիարք Հայրն

հարցում մ'եկած է Աղթամարայ Կաթողիկոսական խնդրոյն նկատմամբ, որ ահաւասակ:

Աղթամարայ Ս. Կաթողիկոսին ապօրէն վարմանց և գործոցը նկատմամբ խիստ անհաճոյ տեղեկութիւններ կառնուին:

Արդ, ներկայիւս կը փափաքիմ գիտնալ թէ Աղթամարայ Ս. Կաթողիկոսն ս'րպիսի ընթացից մէջ կը գտնուի, ստո՛յգ է որ վանք մը ծախեր է քուրդերու և թէ՛ ստո՛յգ է որ ժողովուրդը կը կեղեքուի եղեր Նորին Սրբազնութենէն:

Կառաջարկեմ որ Ս. Պատրիարքը շնորհ ընէ սոյն հարցմանցս պատասխանը տալու:

Աղդ. Երեսփոխան Մ. Գալիամաճեան

11 Յունիս 81 ի Ղալաթիա

Յետ ընթերցման Ատենապետ Էֆէնտի ժողովոյ հաւանութիւնը կառնու հարցման պատասխանը ընելու մասին, և կը յաւելու թէ՛ Սրբազան Պատրիարք Հայրը ներկոյ ըլլալով եթէ պատշաճ դատէ և կամի անմիջապէս պատասխանել, ժողովը կը լսէ հարցման պատասխանն. իսկ եթէ ոչ խնդրոյ կորզը կանցնի և ուրիշ անգամու կը մնայ:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Մեր ալ լրագրաց մէջ կորդացիներ, և փութացիներ գրել Աղթամարայ Ամեն. Կաթողիկոսին, բայց դեռ պատասխան չտուին:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ. — Միայն թէ կը խնդրեմք Ս. Պատրիարքէն որ երբ պատասխան ընդունի, ժողովոյս հարցոյն զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Լսեցիր Ս. Պատրիարք

Հոր պատասխանը. բացատրութիւն պահանջեր է Աղթամարայ Կաթողիկոսէն և տակաւին պատասխան չէ տուեր. երբ պատասխանն ստանայ, ի հարկէ ժողովոյս պիտի հարցորդէ զայն:

5.

Հարցումն առ Ս. Պատրիարքն, Մ. Գալիամաճեան Էֆէնտի կողմանէ, Ամասիոյ Առաջ. Տեղապահ եղեսեան Եպիսկոպոսի նկատմամբ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ուրիշ հարցում մ'ալ կայ Գալիամաճեան Մինաս Էֆէնտի կողմանէ առ Ս. Պատրիարք Հայրն՝ Ամասիոյ Առաջորդական Տեղապահ Եղեսեան Եպիսկոպոսի նկատմամբ: Ահաւասակ:

Ասկէ առաջ հարցում ուղղեցի Ամասիոյ գործոց նկատմամբ առ Ներքին գործոց Խորհրդական Էֆէնտին:

Մինչև ցարդ պատասխանը չստանալով կերկրորդեմ հարցումս, գիտնալ ուղղելով թէ Գեր. Եղեսեան Յովհաննէս Եպիսկոպոս ինչ պաշտօն ունի անդ, և թէ ստո՛յգ է որ Պօլիս կանչուեր և սակայն կանսաստէ Վարչութեան որոշմանը:

Կառաջարկեմ որ սոյն հարցմանցս պատասխանը բարեհաճի տալ Ս. Պատրիարքը:

Աղդ. Երեսփոխան Մ. Գալիամաճեան

11 Յունիս 81 ի Ղալաթիա

Ատենապետ Էֆէնտի այս հարցման համար ժողովոյ հաւանութիւնն ստանալով, կը հարցընէ Ս. Պատրիարք Հոր թէ կուզէ՞ պատասխանել:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Կրնամ պատասխանել:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Պէտք է գրաւոր հարցորդու հարցումը Նորին Սրբազնութեան:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Հոգ չէ. ինչ որ պիտի հարցնէք այսօր հարցուցէք, գալնապիս Պատրիարք չկայ:

Եղեսեանի խնդիրը կարծեմ հարցումն ընողն ալ ըսու գիտէ. և սակայն, ըստ որում կուզէք, կը պատասխանեմ Ձեզ: Եղեսեան կը սէ թէ հիւանդ եմ, պատգարակով կը պաշտիմ և Պօլիս դալու համար տհազին ծախքերու պէտք ունիմ: Իսկիւտար մօրեկրօցր մ'ունի եղեր, բայց մեներ է, ուստի Պօլսոյ մէջ մնալու տեղ չունի: Եթէ Պօլիս գայ, Ս. Փրկչեան Հիւանդանոցը չզտակիր եղեր: Ես ծեր եմ ու մասնաւոր խնամոց պէտք ունիմ, կըսէ: 16 զամբիւ կարասիք ունի եղեր, և կը հարցնէ թէ ինչպէս պիտի կրնայ զանոնք Պօլիս փոխադրել: Եղեսեան այս տեսակ տատրիութիւններով կը պատասխանէ մեզ. մեր ալ գրեցիներ տեղւոյն Վարչութեան որ ծախքն ինչքով Պօլիս գրիէ զնա, սակայն տեղւոյն Գաւառական ժողովն, որ սահմանադրապէս կազմեալ է, գոհութիւն կը յայտնէ Եղեսեան Սրբազանէն. զանգատօղբ ժողովուրդն է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Եթէ հարցման տեղը գոհ է այս պատասխանէն, կրնամք փակել այս խնդիրը:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ. — Շնորհակալ եմ Նորին Սրբազնութենէն որ հաճեցաւ պատասխանել իմ հարցման. սակայն կտրիպով յաւելուլ որ այդ պատասխանը զիս չզստացուց:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Աւելի գոհացուցիչ պատասխանն ինչ վերջն եկողէն կըրնար ուղղել:

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Դիտողութիւն մ'ունիմ: Վարչական կազմակերպութեան ծրարիրն կը տրամադրէ որ հարցմանը Խորհրդականաց ուղղուին. բայց զարմանալի է որ տակաւին կը շարունակուի Ս. Պատրիարք Հոր ուղղել զայնս:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ. — Ես ալ կը յիշեմ վարչական կանոնադրութեան տրամադրութիւնն, զոր Մատթէոս Սրբազան մէջ բերաւ: Առաջին հարցումս ուղղակի Ներքին գործոց Խորհրդականին ուղղեցի, միւսն ալ Կրօնական Խորհրդականին, բայց ինչոյանէ պատասխան չկրցի տանուլ. ուստի այս անգամ Ս. Պատրիարք Հոր ուղղեցի զանոնք գործին վիճակն հասկնալու համար: Հարցում ուղղելն Երեսփոխանի մ'իրաւունքն է, և Ս. Պատրիարք Հայրն պէտք չէ վիրաւորուի իրեն ուղղուած հարցմանց համար, զի հարցումը կատկած չենթադրեր, և իմ հարցումս Ս. Պատրիարքին դէմ իբր ամբաստանութիւն չկրնար նկատուիլ:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ես չեմ վիրաւորուիր: Բայց Կղիկիոյ Կաթողիկոսական խնդրոյն համար ինչո՞ւ այլ ևս չես հարցներ:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ. — Կղիկիոյ Կաթողիկոսական խնդրոյն համար ալ, Էջմիածնոյ խնդրոյն համար ալ հարցումներ ուղղած եմ. բայց ք և կարգօցէք ասանադրութիւններն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ձեր հարցման պատասխանը՝ զոր տուաւ Ս. Պատրիարք Հայրը՝ կրնայ գոհ ընել զՁեզ, զի հասկըցաք թէ Եղեսեանի դէմ միջոցներ ձեռք առնուեր են, իսկ նա ըմբոստ գտնուելով դժուարութիւններ կը յարուցանէ, և Գաւառական ժողովն իրեն զօրավիզն ունենալով, այդ միջոցներուն զօրութիւնը բեկանել կը փորձէ եղեր: Բայց Ս. Պատրիարքն անշուշտ պիտի լուծէ այս դժուարութիւններն, և վերջապէս Պօլիս պիտի

բերել տայ ղեզեւեան : Եւ եթէ երբէք չը յաջողի , որ ենթադրելի չէ , ի հարկէ Ժողովոյս պիտի դիմէ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես տրուած պատասխանէն գոհ չեմ . ուստի կառաջարկեմ որ խնդիրն օրակարգն անցնի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այս խնդիրը տեսակ մը գոյթակղութիւն սիւսած է ժողովրդեան , գուցէ և Երեսօրհանաց մէջ : Վարչութիւնը Առաջնորդ մը կը կանչէ ի Պոլիս , և նա չգար . ուրիշ առաջնորդ մը՝ որ կանչուած չէ՝ կուգայ . եթէ Վարչութիւնը զօրութիւն չունի , թող համարձակ ըսէ , որպէս զի մեր ազգովին դարման մը տանիմք այս աղէտին : Գաւառական Վարչութիւնը գոհութիւն կը յայտնէ եղեր Երեսեանէն , իսկ սա 16 զամբիւղ ունենալը պատճառ կը ըսնէ եղեր Պոլիս չգարու համար : Չը հասկցուի թէ Ս. Պատրիարք Հօր պատասխանը քննադատել կուզեմ՝ նա եթէ այդպէս խօսեցաւ , այս խնդրոյն վերայ սիրան արդէն նեղացած ըլլալուն համար էր անշուշտ : Եթէ Վարչութիւնն՝ իւր հրամանին դէմ Երեսեանին յարուցած դժուարութեանց յողթելու կարող չէ , թող յայտնէ ժողովին , իսկ եթէ կարող է մեր Վարչութիւնը , բաւական է որ յայտարարէ թէ՝ խնդրոյն կարգադրութեան համար հարկ եղած միջոցները գործադրութեան մէջ են :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ ուշադրութիւն ընէիք իմ խօսքերուն , պիտի տեսնէիք թէ նոյն մէջ այդ իմաստն կը բովանդակէր : Նոխազահ Սրբազան չըսաւ թէ՝ Վարչութիւնն անզօր անկարող է խնդիրն լուծելու : Նորին Ազգայնութիւնն Երեսեանի յարուցած դժուարութիւնները թուեց , խնդրոյն յատուցման պատճառն իմացնելու համար : Աւստի Ժողովին պիտի հարցնեմ թէ՝ գո՞չ է Սրբազան Նախադահին տուած պատասխանէն , և բաւական կը համարի՞ զայն խնդիրը փակելու :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Խօսք կուզեմ . իրր առաջարկութեան տէր՝ բացատրութիւն մը պիտի տամ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրը քուէի պիտի դնեմ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Առաջարկութիւնս ետ պիտի աւնում :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսեցէ՛ք ուրեմն :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Քանի որ Ս. Պատրիարք Հայրն ըսաւ թէ՝ սահմանադրապէս կազմեալ Գաւառական Վարչութիւնն Երեսեան Սրբազանէն գոհ է , այս յայտարարութեան վրայ խնդիրն օրակարգն անցնելու առաջարկս ետ կաւնում :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Աւստիկ հարցման հեղինակն ետ կաւնու խնդիրն օրակարգն անցնելու առաջարկութիւնն . և հետեւորար գոհ կըլլայ լսած պատասխանէն : Աւստի յուսամ թէ այլ ես չէք ուզեր խօսիլ այս խնդրոյն վրայ և ամենիդ ալ կը համաձայնիք զայն փակելու :

ՋԱՅՆԵՐ. — Այո՛ , այո՛ :

Ընդհանուր հաւանութեամբ կը ՓԱԿՈՒԻ՝ Ամառիոյ Առաջ. Տեղապահ Երեսեան Եպիսկոպոսի նկատմամբ՝ Գալիսիական Էփէնտի յարուցած խնդիրն :

6 .

Հարցումն առ Տնտեսական Խորհրդ. Էֆէնտին Մ. Գալիսիական Էֆէնտի կողմանէ Եգիպտոսի կալուածական խնդրոյն նկատմամբ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դարձեալ Գալիսիական Մինաս Էփէնտի կողմանէ հարցում մ'եկած է , Եգիպտոսի կալուածոց Թագաւոր փա-

շայի կողմանէ դրաման նկատմամբ : Ահաւստիկ այդ հարցումն ալ :

Ստո՞յգ է որ Յակոբեան Թագաւոր փաշա Աղէքսանդրիոյ մէջ ազգային կալուած մը խիստ նուազ գնով ծախեր է , մինչդեռ կըսուի թէ աւելի զին կընէ եղեր :

Կառաջարկեմ որ Տնտեսական գործոց Խորհրդական Էփէնտին բարեհաճի սոյն հարցմանս պատասխանը փութացնել :

Ս. Գալիսիական Մ. Գալիսիական

11 Յունիս 1881

Ատենապետ Էփէնտի հարցման մասին ժողովոյ հաւանութիւնն առնել յետոյ կը յայտարարէ թէ , այս հարցումն ըստ որում Տնտեսական գործոց Խորհրդական Էփէնտին կը վերաբերի հարկ է յղել առ ձեռնհաս պաշտօնեայն , պատասխանն ընդ վոյթ պատանալու համար :

Հետեւորար Եգիպտոսի ազգ. կալուածոց նկատմամբ վերայիշեալ հարցումն կը ՅՂՈՒԻ ժողովոյն հաւանութեամբ՝ առ Մեծ. Տնտեսական Խորհրդական Էփէնտին , ի տեղեկագրութիւն :

Սոյն սրահուն Ատենապետ Էփէնտին ըստ որում Բ. և Գ. Ատենապետի Էփէնտի բացակայ էին՝ կը խնդրէ Պարոնեան Յակոբ Էփէնտին՝ առժամանակ կերպիւ օղնել Ատենապետի Էփէնտին : Պարոնեան Էփէնտի ընդունելով զայս առաջարկ , կանցնի ի Գիսան :

7.

Հարցումն

Առ Կրթական Խորհրդական Էֆէնտին , Գալիսիական Մինաս Էֆէնտի կողմանէ , Այսրեֆանոյի վարժարանին փակման նկատմամբ .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հարցում մ'եւս ունի Գալիսիական Էփէնտի Այս ալ առ Կրթական Խորհրդական Էփէնտին ուղղեալ է , Այսթէֆանոյի վարժարանին փակման նկատմամբ : Ահաւստիկ :

Ստո՞յգ է որ Այսթէֆանոյի վարժարանը փակուեր է . և եթէ ստոյգ է , պատճառն ի՞նչ է :

Կը խնդրեմ որ Կրթական Խորհրդական Էփէնտին բարեհաճի պատասխանել :

Մ. Գալիսիական

25 յունիս 81

Հարցման նկատմամբ ժողովոյ հաւանութիւնն ստանալէ յետոյ , Ատենապետ Էփէնտի կառաջարկէ յղել զայն ըստ օրինի՝ առ Կրթական Խորհրդական Էփէնտին : Եւ ժողովն ըստ այսմ կը ՅՂԷ զայս հարցում , ի տեղեկագրութիւն :

8 .

Առաջարկ մի բանի երեսփոխանաց Մալեգեան պատուելիի գերեզմանին վրայ շիրիմ կանգնելու համար .

Թէպէտ Ատենապետ Էփէնտի կը ծանուցանէ թէ տնտեսական գործողութեանց յատկացեալ ժամը 15 վայրկեան ալ անցած ըլլալով , այլ ևս օրակարգին անցնիլ կը սրբապատրի , բայց Փաիազեան Էփէնտի կը խնդրէ , և զա-

նազան նստարաններէ ալ կը ձայնակցին, որ բարեյիշատակ Մալէզեան պատուելոյն գերեզմանին վրայ շիրիմ կանգնելու համար մի քանի Երեսօխտանաց կողմէ մատուցեալ առաջարկը գոնէ ներկայանայ Ժողովոյն:

Այս խնդրանաց գէ՛մ Երեսօխտանաց ընդհանրապէս պահած լուծիւնը հաւանութեան գոյն կառնու, ուստի և Ատենապետ Էֆէնտի կը հրաւիրէ զԱտենապետ Էֆէնտին ընթեռնուլ այն առաջարկն, որ ահաւասիկ:

Կառաջարկենք հետեւեալը, խընդրելով Ատենապետ Էֆէնտիէն որ բարեհաճի զայն Ազգային Ժողովոյ հաւանութեանն ենթարկել:

« Ազգային Ժողովս ցաւօք սրտի լըսելով Յովսէփ Մալէզեան բազմարդիւն վարժապետին և յիսնամեայ աշխատաւորին մահը, կորոշէ ի յիշատակ նորահանգնել շիրիմ մի, հանգուցելոյն մարմնոյն վրայ, որոյ ծախուց վճարումն կարտօնէ Տնտեսական Խորհրդականին մինչև 3000 դրչ. և շինութիւնն ալ կրթական Խորհրդականին կը յանձնարարէ:

25 Յունիս 1881

- Ս. Պ. Պ. Փօփօն
- Մ. Գ. Գ. Գ. Գ.
- Ա. Բ. Ա. Գ.
- Կ. Գ. Գ. Գ.
- Ս. Հ. Ֆեյի
- Մ. Չ. Գ.
- Ա. Յ. Ա. Գ.
- Հ. Ս. Ա. Գ.

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐՊԷՅ. — Ինձ կերելի թէ շատ օրինաւոր է այս առաջարկն, ըստ որում հանգուցեալ Մալէզեան պատուելի բողոք ժամանակներ, 40 տարուց չափ գրեթէ, աշխատած է Ազգին համար և պտուղներ արտադրած: Ես ինքս ի մօտոյ ճանաչելով

զինքն, Ազգին վրայ նորա ունեցած բարի մը տածութիւններուն լաւ տեղեակ եմ, ուստի ես կը համարիմ թէ Ազգն իւր երախտագիտական պարտականութիւնը կատարած կը լինի, եթէ իւր ամբողջ կեանքն Ազգին վերաշինութեան նուիրող այսպիսի ազգասէր անձի մը գերեզմանին վրայ գոնէ շիրիմ մը կանգնէ:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Ոչ որ կուրանայ թէ Մալէզեան պատուելի 40 տարի շարունակ ինքզինք Ազգին նուիրելով մեծ ծառայութիւններ մատուցած է Ազգին, ինչպէս վկայեց Տ. Խորէն Արքադան: Ի նշան երախտագիտութեան՝ մի քանի օղնուասիրտ Երեսօխտանաց կողմանէ կուզայ սցսօր առաջարկ մը շիրիմ կանգնելու նորա գերեզմանին վրայ: Առաջարկութիւնն անշուշտ խիստ աղնիւ զգացումէ մը յառաջ եկած է, սակայն ներսի ինձ դիտողութիւն մ'ընելու: Մալէզեան պատուելի վարժապետ մ'է, ես ալ անշուշտ նոյնն լինելով, ոչ առանց նախանձու, պիտի առաջարկեմ մերթել այդ առաջարկն, թէ և զարմանալի թուի ձեզ իմ մերթումը: Երբ մտածեմ թէ ընդհանուր Ազգը ներկայացնող Ժողովոյ մ'որոշմամբ անհատի մը գերեզմանին վրայ կանգնուած շիրիմն ամենէն մեծ, ամենէն գերազանց պատիւն է, քան ինչ պատիւ որ կարելի է տալ նմա, կառաջարկեմ չընդունիլ զայն, զի տրուած պատիւն պէտք է համապատասխանէ մատուցուած ծառայութեան: Եթէ Մալէզեան պատուելի գերեզմանին վրայ կառուցուի առաջարկեալ շիրիմն, յայնժամ պիտի պարտաւորիմք՝ ամեն անգամ որ վարժապետ մը կը մեռնի՝ շիրիմ կանգնել նորա գերեզմանին վրայ: Եւ կը հօրցնեմ, անոնք որ տպագային մէջ ամենամեծ ծառայութիւններ պիտի մատուցանեն Ազգին, անոնք որ նահատակ պիտի լինին՝ ի սէր հայրենեաց և Ազգին, այդպիսեաց ինչ պատիւ պիտի սահմանէ Ազգ. Ժողովն, երբ պատիւներուն ամենէն գերազանց իւր կեանքը սարգ վարժապետութեամբ անցընող անհատի մը կը սահմանէ: Ասով չը կար-

ծէք թէ ուրոնալ կ'ուզեմ Մալէզեան պատուելի Ազգին մատուցած ծառայութիւնն, սակայն կը մտածեմ թէ արդեօք լաւագոյն չը լինի՞ր որ իւր աշակերտք կառուցանեն այդպիսի մի շիրիմ, որպէս զի մեք բացառիկ ծառայութեանց վերապահեմք այս պատիւն:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐՊԷՅ. Արդեօք Ժողովն չ'ուզե՞ր հոս վերջացնել այսօր այս խնդիրն:

ՁԱՅՆԵՐ. — Կը ձայնակցիմք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսեցիք առաջարկութեան վրայ թեր ու դեմ խօսուածներն, ուստի պէտք է փակել այժմ վիճարանութիւնն և խնդիրն յղել ի նախաքննութիւն:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐՊԷՅ. Արդեօք Ժողովն չ'ուզե՞ր հոս վերջացնել այսօր այս խնդիրն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Շատ սխալ յայտարարութիւններ ըրաւ Պէրպէրեան Էֆէնտի. պէտք է ուղղել զայնս, բայց հիմայ ժամանակը չ'է: Կը ցաւիմք որ այս ընդդիմութիւնն նոյն խի վարժապետի մը կողմանէ տեղի կ'ունենայ: Քանի որ ընդդիմախօս ունեցանք, պէտք է նախաքննութեան յղել առաջարկը. օրն եկած ատեն կը խօսիմք:

ՁԱՅՆԵՐ. — Քուէ՛, քուէ՛:

ՆԱԽԱԳԱՋ ՍՐԲԱՋԱՆ. — Ես մտիկ բրի թէ՛ առաջարկութիւնն, թէ՛ Խորէն Արքադանն և թէ՛ Պէրպէրեան Էֆէնտին: Ես ինքս ալ յիշատակոց արժանի կը գտնեմ զՄալէզեան պատուելի, գլխաւորաբար անոր համար որ մինչև վերջն իւր վարժապետական պաշտօնը խզի մտօք կատարած է, ասարեղէն խոյս տուած չէ, մանաւանդ ազգային խնդրոց ամենեւին միջամուխ եղած չէ: Եւ ես ահաւասիկ իմ առնելիքէս 3000 դրչ. կը նուիրեմ այն շիրիմը կառուցանելու համար. Կեղր. Սնտուկը թո՛ղ վճարէ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ դաստիարակ չ'ե-

ղաւ, սրաճառն այն էր որ վարժապետ մնալու պարտաւորեալ էր, ուստի կղզուշունար ազգային գործոց միջամտելէ, և անոր համար չ'իսխուցին զինքը վարժապետական ասպարէզէն: Գալով Ս. Պատրիարք Հօր նուէրին՝ շնորհակալ եմք, բայց պէտք է Ազգը տայ այդ ստակը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս խնդրոյն վրայ թեր ու դեմ խօսուելէ յետոյ՝ անշուշտ յղում պէտք էր կատարուիլ ըստ օրինի. բայց Ս. Պատրիարք Հայրն այնպիսի յայտարարութիւն մ'ըրաւ որ գոզցես բացառիկ վիճակ մը տուաւ խնդրոյն, և Դիւանս ալ շփոթութեան մէջ մնաց:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐՊԷՅ. — Տեսրք Երեսօխտանք. մեր Արքադան Նախագահին պարտաւոր եմք խորին շնորհակալութիւն յայտնել այսպիսի խնդիր մ'ստանձնելուն համար, զի ասով յայտնի կը տեսնուի թէ իւր առաջ ո՞ր ատիճան կարեւորութիւն ունի դաստիարակութեան խնդիրն: Քառասուն տարի վարժապետութիւն ընող . . .

ՁԱՅՆԵՐ — (Ընդմիջելով) Յիսու՛ն տարի, վաթսու՛ն տարի:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐՊԷՅ — (Շարունակելով) Յիսու՛ն, վաթսու՛ն տարի վարժապետութիւն ընող և անշուք կերպով ի գերեզման ուղարկուող անձ մը՝ յիսուսի արժանի է այս պատուոյն: Ինձ պատասխան տրուեցաւ թէ՛ իւր աշակերտք թող մահարձան կանգնեն. բայց ես կը հարցնեմ՝ որո՞ւ համար պատրաստեց նա իւր աշակերտները, ո՞չ ապաքէն իւր Ազգին համար, այն Ազգին որուն իւր անձն զո՞ տուաւ: Եթէ իւր աշակերտք չը ճանչեն նորա երախտիք, Ազգը պէտք է մոռնայ զայն: Այնպիսի ժամանակի մը մէջ կայրիմք յորում վարժապետք նկու՛ն վիճակ մ'ունին . . .

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Ընդմիջելով) Ողորմելի՛, հուլածեա՛լ:



Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ ՊԵՅ — (Շարու-  
նակելով) Ես ինքս ցաւով տեսած եմ նոցա աչ-  
խատութիւնքն, և տաւել ցաւօր տեսած եմ  
որ չիք նոցա համար վարձատրութիւն: Երբ  
աշխատաւոր մշակ մը յիտուն տարի շարունակ  
իւր անձն Ազգին կը նստի, ինձ կը թուի թէ  
այն Ազգն իւր վեհանձնութիւնը չցուցնէր, և  
թէ ներկայ առաջարկը չուզէ ընդունիլ: Ինձ  
կը թուի թէ այն Ազգն երախտագիրութեան  
ապացոյց տալ չուզէր, և թէ չուզէ դամբան  
կանգնել այնպիսի մի մարդու որ այնչափ  
բարձր դիրք ունէր, փայլուն անուն ունէր:  
Անչուն երախտիք պարտիք այն անձին՝ որ  
ոչ թէ Ազգին այժմու վիճակին մէջ սլալ յի-  
տուն տարիէ ի վեր Ազգին ապագայ պատրաս-  
տելու կաշխատէր: Այժմու ուսուցիչը և դա-  
սատուք մեծ գործեր կը տեսնեն, բայց այն  
ժամանակները յորում Մալէզեան կաշխատէր  
ղգացմամբ, չկային այժմու դիւրութիւնք. և  
թէ արդի ուսուցիչը պատուելի և սիրելի են  
մեզ, որչափ առաւել այսպէս սրտովն լինել  
չին ուսուցիչը: Արեւն կը կրկնեմ, Յովսէփ  
Մալէզեան, որչափ նսեմ, աննշան վիճակի  
մէջ ալ տարեցաւ, ըստ որում այնքան աչա-  
կերտներ հասոյց, արժանի է որ ժողովս մտ-  
հարձան մը կանգնէ նորա գերեզմանին վրայ:  
Ազգային ժողովոյ Սրբազան Նախագահը՝ ճա-  
նաչելով Մալէզեանի արժանիքը՝ կը խոստանայ  
ինքն նստիլ մահարձանի կանգման համար  
հարկ եղած ծախքն, բայց ես ժողովոյս պատ-  
ւոյն չեմ ձգեր որ ընդունի զայդ նուէր, և  
ինքը շատանձնէ այսպիսի փոքր զոհողութիւն  
մը, յիտուն տարուան քրտնաջան մշակի մը  
համար: Ձեր խղճին և ազգասիրութեան կը  
թողում ուրեմն հարկ եղածը տնօրինել:

Մի բանի երեսփոխանք և մասնաւորա-  
բար Պէրպէրեան Էֆէնտի խօսք կուզեն զէմ  
խօսելու համար: Եւ զանազան նտարաններէ  
և յղման բուէ՝ կազմակերպեն:

Ատենապետ Էֆէնտի կը յայտարարէ թէ  
բանի որ խնդիրը թեր ու դէմ խօսողներ ունի,  
ըստ օրինի՝ նախաքննութեան յղելէ ուրիշ բան  
չկրնար ընել, և հետեւաբար խնդրոյն վրայ և  
ոչ մէկու խօսք կրնայ տալ: Ուստի և կը  
խնդրէ որ յղման վրայ կտրծիր յայտնել բա-  
րեհաճին Երեսփոխանք:

Այս մասին յայտնուած զանազան կար-  
ծիրները լուսելէ յետոյ՝ Փափազեան Էֆէնտի  
առաջարկութեամբ Գատարակութեան Գիւա-  
նին յղելու համար բուէի կը դնէ խնդիրն Ա-  
տենապետ Էֆէնտի, և ժողովը մեծամասնու-  
թեամբ ԿՈՐՈՇԷ յղել Գատարակութեան  
Գիւանին ի նախաքննութիւն, Մալէզեան  
սրտուելոյ գերեզմանին վրայ Ազգին ծախք  
չլրիմ կանգնելու առաջարկն:

9.

Առաջարկ վարչութեան  
Քաղաքային Ատենի կազմութիւնն ամբողջելու  
մասին.

ԱՏԵՆԱՊԵՅ ԷՖ. — վարչութեան պաշ-  
տօնագիր մի կրնայնէ թէ Քաղաքային Ատեա-  
նին իւր անդամոց երկուքին հրաժարման և  
միոյն բացակայութեան պատճառաւ՝ չէ կրցած  
գումարուիլ ցարդ, և կառաջարկէ այն երկու  
հրաժարելոց տեղ նոր ընտրութիւն կատարել:  
Ահաւասիկ այդ պաշտօնագիրն:

Վսեմաշուք Ատենապետ Էֆէնտի  
Ազգային Ընդհ. ժողովոյ

Քաղաքային Ատենի անդամներէն  
Կարապետ Էֆէնտի Շահպաղ և Սենեքե-  
րիմ Էֆէնտի Մանուկեան իրենց ընտրու-  
թեան օրէն սոյն պաշտօնէն հրաժարու-  
տուած լինելով, և ուրիշ անդամ մ'ևս  
ուղևորութեան պատճառաւ մայրաքա-

ղաքէս բացակայ դանուելով, Քաղա-  
քային Ատենը չէ կրցած ցարդ օրինա-  
ւորապէս գումարուիլ և իւր պաշտօնին  
ձեռնարկել:

Ուստի Ազգային վարչական Խոր-  
հուրդն Պատկառելի ժողովոյդ կը դիմէ,  
և կառաջարկէ որ բարեհաճի հրաժարեալ  
երկու անդամոց տեղ նոր ընտրութիւն  
կատարել և Քաղաքային Ատենի էու-  
թիւնն ամբողջելով գործելու կարող վի-  
ճակի մէջ դնել զայն:

Ի դիմաց Ազգ. վարչ. Խորհրդոյ  
Վսեմ. Ատենադպրի Վսեմ. Ատենապետի  
Ս. Ազնուար Մ. Մամիկոնեան  
ի Պատրիարքարանի Հայոց  
Կ. Պօլիս  
3 Յունիս 1881

[ Յետ ընթերցման ]

Ժողովն հասանութիւն կը յայտնէ վար-  
չութեան առաջարկին, և հետեւաբար ԿՈՐՈՇՈՒԻ  
օրակարգն անցնել Քաղաքային Ատենի պա-  
կասեալ անդամոց ընտրութիւնն, ըստ օրինի  
Ատենապետոց Գիւանէն ներկայելի ցանկին  
վրայ կատարելու համար:


Գ.Ա.Գ.Ա.ԲՈՒՄՆ  
ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՈՒԹԵԱՆՑ

Նախագահ Սրբազան կուզէ իմանալ Գի-  
ւանէն թէ դեռ ևս ի՞նչ խնդիրներ կան ժո-  
ղովին այտօրեայ նկատողութեան ներկայելի:

Առ այս Ատենապետ Էֆէնտի կը պատաս-  
խանէ թէ՛ ատենական գործողութեանց վե-  
րաբերեալ շատ խնդիրներ կան դեռ ևս. և  
զանոնք թուելէ յետոյ՝ բայց, կըսէ, Գիւանը

սրտուաւորեալ է կրկին անգամ ժողովին յի-  
շեցնելու որ օրէնք մէկ ժամ միայն կը սահ-  
մանէ ատենական գործողութեանց համար, և  
այդ ժամն արդէն լրացած անցած է: Եթէ,  
կըսէ, Երեսփոխանը շարունակել ալ ուզեն  
ատենական գործողութիւններն, Գիւանը չը  
պիտի կրնայ թոյլատրել, զի կարելի չէ խրա-  
քանչիւր նստի համար մտանաւոր օրէնք շինել.  
Կամ մէկ ժամէն աւելի գրողելու չէ տեսնա-  
կան գործողութեամբ, կամ ջնջելու է օրինաց  
այդ տրամադրութիւնն:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ



Տեղեկագիրք Երեսփոխանական Նորոգ  
ընտրութեանց.

Ատենապետ Էֆէնտի ծանուցանելով թէ  
Իւսկիւտարու Ս. Խաչ թաղէն, Խաչիւղի թա-  
ղէն, Պալլըբէտի և Խարրերդու գաւառներէն ե-  
րեսփոխանական նոր ընտրութիւններ կան ժո-  
ղովոյ վաւերացման ենթարկելի, կը հրաւիրէ  
զԱտենադպր Էֆէնտին ընթերցուլ այս ընտ-  
րութեանց վերաբերեալ գրութիւններն:

Մանօթագիր վարչութեան  
Վսեմախալ Ատենապետ Էֆէնտի  
Ազգային ժողովոյ  
Իւսկիւտարու Ս. Խաչ Եկեղեցւոյ

Թաղին Ընտրողական Ժողովին կողմէն Պատրիարքարանս հասած տեղեկագիր մը կը յայտնէ թէ՛ սոյն թաղէն պակասած երկու երեսփոխանաց տեղ նորոգ ընտրութեամբ երեսփոխան ընտրուած են .

Աւետիս Էֆէնտի Տ. Սահակեան Գարրիէլ » Նորատունկեան , որոց առաջինն յանձն առած է վարել երեսփոխանական պաշտօնն , իսկ երկրորդըն , որ բացակայ է մայրաքաղաքէս , հոս գտնուած Ժամանակ իւր հաւանութիւնն յայտնած է , ինչպէս ընտրական տեղեկագիրը կը ծանուցանէ . Այսու ամենայնիւ Վարչութիւնն պարտք կը համարի ժողովոյդ յիշեցնել որ , թէև 1879ին ևս Նորատունկեան Գարրիէլ Էֆէնտի երեսփոխան ընտրուած է Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցւոյ թաղէն , սակայն նոյն տարւոյ բացման Գ. Նիստին մէջ , որ ի 22 Յունիսի , յիշեալ Էֆէնտի ընտրութիւնը ժողովէդ վաւերացուած չէ Վարչութեան այն ծանօթագրոյն վրայ՝ որ Նորատունկեան Գարրիէլ Էֆէնտի 1852 թուականին մէջ ծնած ըլլալն և հետեւապէս երեսփոխանութեան համար պահանջուած տարիքը լրացուցած չըլլալն յայտնած էր . Աւելորդ է յարել որ այսօր ևս Նորատունկեան Էֆէնտին երեսփոխանական տարիքը թեւակոխած չէ դեռ .

Նոյնպէս Խառնուղի Ընտր. Ժողովոյ կողմէ Պատրիարքարանս ղրկուած տեղեկագիր մը կը յայտնէ թէ՛ հրաժարեալ Ազնաուր Էֆէնտի տեղ նոյն թաղէն երեսփոխան ընտրուած է ,

Նիկողոս Էֆէնտի Թիւլպէնտճեան , որ իւր յանձնառութիւնն յայտնած է գըրով :

Պալըքէսիւրի Գաւառական Ժողովոյ

կողմէ ղրկուած տեղեկագիր մը կը յայտնէ թէ՛ նոյն գաւառէն երեսփոխան ընտրուած է ,

Ստեփան Էֆէնտի Բօլջուան , որ իւր հաւանութիւնն յայտնած է ձեռագրով :

Խարբերդու Գաւառ. Ժողովն իւր մէկ տեղեկագրովն կը յայտնէ թէ՛ նոյն գաւառէն երեսփոխան ընտրուած է ,

Պետրոս Էֆէնտի Միսաքեան , որ յանձն առած է վարել երեսփոխանութեան պաշտօնը :

Ազգային Վարչական Խորհուրդն յիշեալ նորընտիր երեսփոխանաց , ի բաց առեալ Նորատունկեան Գարրիէլ Էֆէնտին՝ որ օրինական տարիքը չունի , ընտրելութեան հանգամանքներն քննելով՝ ըստ ամենայնի Ազգ. Սահմանադրութեան համաձայն կը գտնէ , և կը փութայ ներկայ ծանօթագրով ընտրութեանց տեղեկագրերն՝ ընտրելոց յանձնառութեան զրեբուն հետ կցորդուած՝ ներկայել Պատկառելի Ժողովոյդ , ի քննութիւն և ի վաւերացումն :

Ի դիմաց Ազգ. Վարչ. Խորհրդոյ  
Վսն. Ատենադպրի Վսն. Ատենապետի  
Ս. Ազնաուր Մ. Մամիկոնեան

Հետեւաբար Ատենադպրի Էֆէնտին կ'սկըսի ընթեանու թաղերէն եկած տեղեկագրերն :

1 .  
Տեղեկագիր Ընտր. Ժողովոյ Իսկիւտար Ս. Խաչ բաղի .

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր .

Թաղիս երեսփոխաններէն հրաժար-

եալ Վսեմաշուք Ստեփան Փաշա Արսլանեանի և Մեծ. Աղեքսանդր Էֆէնտի Մէրեէմ-Գուլի տեղ նորոգ ընտրութեան համար Ձեր Բարձր Սրբազնութեան 203 թուահամար և 17 Ապրիլ թուական հըրամանագրոյն համեմատ ըստ Սահմանադրութեան Ընտրողական Ժողովն կազմելով , քուէարկութեան բոլոր նախապատրաստութիւններն ըստ օրինի կատարուելէն զինի՝ ընտրութեան առաջին քուէարկութիւնը տեղի ունեցաւ 17 Մայիս կիրակի , և 293 ընտրողներէն 128 քուէ ընդունուեցաւ , որոնց 61 անձամբ և 67 նամակաւ :

Քուէարկութիւնը տեւեց ժամ 12 էն և , այնուհետև քուէհամարի դործողութիւնը կատարուելով՝ տեսնուեցաւ որ բացարձակ առաւելութեամբ ոչ ոք քուէ ստացած է , հետեւաբար սրտուեցաւ համեմատական երկրորդ քուէարկութիւն կատարել 24 Մայիս կիրակի , առաւելագոյն քուէ ստացող հետեւեալ անձանց վըրայ , որք են ,

քուէ

Գարրիէլ Էֆէնտի Նորատունկեան	37
Աւետիս » Տ. Սահակեան	35
Ազարիկ » Գէորգեան	34
Պօղոս » Սուրեան	22

Այս անձանց վրայ քուէարկութիւնը կատարուելով 24 Մայիս կիրակի օր , 293 ընտրողներէն 117 քուէ ընդունուեցաւ , որոնց 49 անձամբ և 68 նամակաւ , և մէկ քուէթուղթ անվաւեր համարուեցաւ անստորագիր նամակաւ ըլլալուն համար :

Քուէարկութիւնը տեւեց ժամ 12 էն և , այնուհետև քուէհամարը կատարուե-

լով տեսնուեցաւ որ՝ հետեւեալ երկու անձինք առաւելագոյն քուէ ստանալով երեսփոխան ընտրուած են ,

Գարրիէլ Էֆ. Նորատունկեան 81 և Աւետիս » Տ. Սահակեան 74 քուէով :

Եւ որովհետև ըստ հրահանգի Սահմանադրութեան ընտրելեաց հաճութիւնըն գրաւոր ընդունիլ հարկ էր , սակայն Գարրիէլ Էֆ. Նորատունկեանի քուէարկութիւնէն առաջ Պօլսէն պաշտօնով բացակայ ըլլալիքը տեղեկանալով՝ իրմէ կանխա հաճութիւն ստացանք բերանացի . իսկ Աւետիս Էֆ. Տ. Սահակեանի ընտրութիւնըն իրեն ծանուցինք նամակաւ և ընդունելութեան զիրն պահանջեցինք , որ ընդունած է ի տեղեկագրոյս ներկայեալ գրութեամբ՝ իւր ընտրութիւնը :

Հետեւաբար տեղեկագրելով զայս Ձերդ Սրբազնութեան ,

Մնամ աղօթարար  
Նախագահ Ընտրող. Ժողովոյ և Առժամանակեայ Քարողիչ Ս. Խաչ Եկեղ. Գրիգորիոս Եպիսկ. Տարօնոյ

Ընտրող. Ժողովոյ  
Վասն Ատենադպրի Ատենապետ  
Կրպ. Գուլամեան Գ. Գասպարեան

10 Յունիս 1881

Յանձնառագիր Տ. Սահակեան Աւետիս Էֆէնտիի .

Գերապատիւ Տէր Սրբազան

Թէև անձնական տկարութիւնս և գործոցս ստիպումը չեն ներեր ինձ այն-

պիսի վախուկ և ծանր գործ մը յանձն առնուլ, սակայն վերջին անգամ՝ աղղա- յին ամենակարևոր և կենսական խընդ- րոց ըստ իմ կարեացս օժանդակելու յօ- ժարութեամբ, և պատուական թաղեց- ւոցդ ալ առ իս ունեցած համակրու- թեանը համապատասխանելու վախճա- րանք կընդունիմ անոնց ընտրութիւնը ա- մենայն երախտագիտութեամբ:

Մնամ Ձերդ Սրբութեան  
ամենախոնարհ ծառայ  
Ա. Ե. Ռիս Տէր Սահակեան

7 Յունիս 1881  
Ի ճատիէ

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՑ. — Իւսկիտարու տեղե- կագիրը կը յայտնէ թէ Երեսօթխան ընտրուե- ր են Աւետիս Էֆէնտի Տէր Սահակեան և Գոր- բիէլ Էֆէնտի Նորատունկեան, բայց վար- չութեան ծանօթագիրը կըսէ թէ՛ Գ. Նորա- տունկեան Էֆէնտի օրինական տարիքը լրացու- ցած չէ, Երեսօթխան ըլլալու համար:

Այս մասին եթէ խօսք ուզող չկայ, հարկ կը լինի Աւետիս Էֆէնտի Տէր Սահակեանի ընտրութիւնը միայն քուէի դնել, և խնդրել վարչութեանն որ Գորբիէլ Էֆէնտի Նորա- տունկեանի տեղ նոր ընտրութեան հրահանգ տայ:

Խօսք ուզող չեղաւ, և Ատենապետ Է- ֆէնտին քուէի դրաւ Աւետիս Էֆէնտի Տէր Սահակեանի ընտրութիւնը, զոր ժողովը միա- ձայն վ. Ա. Ե. Ե. Ե. Ե.:

Ուստի և Ատենապետ Էֆէնտի Երեսօթ- խան ՀՈՉԱԿԵՑ

Վ. Աւետիս Էֆէնտի Տէր Սահակեան:

Ատենապետ Էֆէնտի շարունակեց ըն- թեանուլ:

2.

Տեղեկագիր Խասգիւղի.

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր

Խասգիւղի թաղէն նորագ ընտրեալ երեք երեսօթխաններէն մին, Սերովբէ Էֆէնտի Աղնաւոր, միանգամայն ինոյն պաշտօն կոչուելով Կարնոյ գաւառի կող- մանէ, Ձեր Բարձր Սրբազնութեան ա- ռաջարկին վրայ Խասգիւղի ընտրութիւ- նը թողլով Կարնոյ գաւառինը ընդու- նելուն, Ձեր Բարձր Սրբազնութեան պաշտօնագրոյն որ 9 Յունիսի 1881 Համար 384, և ընտրական հրահանգաց համեմատ՝ Ընտրող ժողով կազմուելով, երեսօթխանական ընտրողաց և եռապա- տիկ թուով ընտրելեաց ցանկերն պատ- րաստելէ, ի տես հասարակութեան գըր- ուելէ, և յրագրաց մէջ ծանուցմամբ հրատարակուելէ վերջը, մէկ երեսօթխա- նի ընտրութեան քուէարկութիւնը կա- տարուեցաւ, Կիւրակի օր 21 Յունիսի, Ս. Ստեփաննոս Եկեղեցւոյ մէջ, ի ներկայու- թիւն յատուկ քննչաց և ժողովրդեան: Մոյն քուէարկութեան ընդ ամենն 73 քը- ւէարկու ընտրողք մասնակցեցան 33ը նամակաւ և 33ը անձամբ, Որոշեալ ժա- ման քուէհամարը կատարուելով ի ներ- կայութեան ժողովրդեան, Մեծ. Նիկո- ղոս Էֆ. Թիւրքմանեան 67 քուէով բա- ցարձակ առաւելութիւն ստացաւ, Հե- տևարար Մեծ. Նիկողոս Էֆ. Թիւրքմա- նեան Խասգիւղի թաղի կազմանէ Ազգա- յին Երեսօթխան ընտրեալ է:

Ընտրողական ժողովն՝ սոյն ընտրու- թեանէն յետոյ յիշեալ ընտրելոյն գիմե- լով, արդէն իւր հաւանութիւնը ստա- ցած է որ յանձն կառնու ստանձնել սոյն պաշտօն ըստ գրաւոր յայտարարութեան որ աստ ներկակեալ է: Ուստի պատիւ ունիմք Ձեր Բարձր Սրբազնութեան յը- ղել ներկայ տեղեկագիրն, ընդ որ և նը- շանակեալ յանձնառագրութիւնն առ ի լրումն պաշտօնի Ընտրողական ժողովոյ:

Մնամք ակնածական խոնարհու- թեամբ խոնարհ ծառայք,

Նախագահ Երեսօթ. Ընտրող ժողովոյ  
Գրիգոր Եպիսկ. Տ. Պողոսեան

Ատենապետ Խասգիւղի  
Ռուբեն Կ. Պուլկուրեան Եղիա Շանպուգեան

Խասգիւղ 23 Յունիս 1881

Յանձնառագիր Ն. Թիւրքմանեան Էֆէնտի:

Գեր. Ս. Հայր Նախագահ Ընտրող  
ժողովոյ Խասգիւղի

Ի պատասխանի յանձնառութեան հրաւիրագրիդ, շնորհակալութիւնս մա- տուցանելով Ձեզ և պատուարժան ընտ- րողաց թաղիս, վասն այն բարձր հա- մարման զոր կը վկայէքդ առ իս, կը զու- թամ յայտարարել թէ պատ. թաղեցւոցս սոյն համակրական վստահութիւնը նոր քաջալեր մ'է իմ այն համոզման թէ իւր- եանց ըզձիցն հաւատարիմ թարգման կանդնելով, պիտի կարենամ յարատեւել և յայսմհետէ ջանադիր և օգտակար

գանուելու ի ծառայութիւն ազգային շահուց և իրաւանց, այս նոր կոչմանը մէջ զոր ինձ յանձնելու պատիւը կընեն:

Մատչելով ի համբոյր Աջոյ Գերա- պատուութեանդ,

Մնամ որդիական յարգանք  
Ամենախոնարհ ծառայ  
Նիկ. Թիւրքմանեան

23 Յունիս 1881 Խասգիւղ

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՑ. — Խասգիւղի տեղեկա- գիրը լսեցիք: Աղնաւորեան Սերովբէ Էֆէնտի տեղ երեսօթխան ընտրուեք է Թիւրքմանեան Նիկողոս Էֆէնտին: Այս ընտրութիւնն ալ ժո- ղովոյ վաւերացման պիտի ենթարկի: Սակայն՝ ինչպէս գիտէք՝ որոշում մ'ըրած էք այս մա- սին, և անոր գործադրութիւնն՝ ի ձեռն վար- չական Խորհրդոյ՝ Նախագահ Սրբազանին յանձնարարած էք, զորմէ վարչութիւնն իւր ծանօթագրին մէջ պարտէր խօսիլ, ինչպէս խօսած է Գ. Նորատունկեան Էֆէնտի տար- եաց անբաւականութեան մասին:

Ինչիր եղած էք առաջի ժողովոյս թէ՛ Թիւրքմանեան Էֆէնտի ընտրող և ընտրելի լինելու հանգամանքը կը սրահ թէ՛ ո՛չ, և այս խնդրոյն քննութիւնն Ամեն. Ս. Պատրիարք Հօր յանձնարարած էք կատարել վարչական Խորհրդոյ ձեռամբ, և արդիւնքը ժողովիս հա- զրդել: Ուստի պէտք է վարչական Խորհր- ղէն կամ անոր Նախադասչէն սպասուած տե- ղեկութիւնն ուղել կանխաւ և ըստ այնմ ընտ- րութիւնը վաւերացման ենթարկել:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՑ. — Տեղիք Երես- օթխանք, Թիւրքմանեան Նիկողոս Էֆէնտի տեղ առաջ Խորհրդէն երեսօթխան ընտ- րուած էք, սակայն ժողովը չվաւերեց այն ընտրութիւնն՝ ընտրեալին ինչ ինչ հրատարա-

կուժեանց համար : Շինակը խօսելով ես շատ համակարծիք չէի այն որոշման . ըսել չեմ ուզեր թէ Թիւլզնտճեան Էֆէնտի իրաւունք ունէր իւր հրատարակութեանց մէջ , բայց յարգելով կարծեաց ազատութեան սկզբունքն , ես չէի կրցած համակարծիք լինիլ ժողովոյս :

Թիւլզնտճեան Էֆէնտի իմ անձա ալ հըրատարակաւ բննադատած է յաճախ . բայց ուրովետե մամուլը ազատութիւնը կը յարգեմ , նորա ընտրութիւնը բեկանելու կողմը չէի գտնուած . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդրէն կը շեղիք Գափաստճեան Էֆէնտի :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ներեցէ՛ք , խնդրոյն պիտի դառնամ :

Գողով սցարուան խնդրոյն . Ատենապետ Էֆէնտին ժողովոյս մի որոշումը յիշեցուց , սակայն երբ վարչութիւնը այն ընտրութեան տեղեկագիրը հոս կը բերէ առանց որ և է զիտողութիւն ընելու իւր կողմանէ , առի կը նըշանակէ թէ Թիւլզնտճեան Էֆէնտի ընտրող և ընտրելի լինելու իրաւունքը ճանաչեր է : Արեւմտ սէտք է անմիջապէս վաւերացնեմք այս ընտրութիւնն :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Ես ալ խնդիրն սկզբան տեսակէտով պիտի քննեմ : Մահմանազրութեան ոգին քուէն է . երբ այս վերջներ , ամբողջ շէնքը կը խորթի : Սակայն քուէին արժէք տուող բանն ազատութիւնն է : Ճշմարիտ սահմանադրականութիւնն ընտրողին և ընտրելոյն ազատութեանը մէջ կը կայանայ . ընտրողն ազատ է իւր ընտրութեան մէջ և ընտրեալն չկրնար երբէք իւր իրաւունքն զրկուիլ , երբ ընտրելութեան հանգամանքները կը սրահէ յանձին : Ընտրողին և ընտրելոյն հանգամանքները զիտենք , որչնքը բացայայտ մեր առջև կը դնէ զայնս : Եւ որովհետեւ խնդիրն ընտրելոյն վրայ է , կը յիշեմ

աստ որ նա սրբաբար լինիլ Յոսիանեան հրատարակողային գործոց հմուտ , բանիրուն , 30 տարին քրտուցած , և ինչ երբ ընտրեալն այս հանգամանքները կը կրէ յանձին , նորա իրաւունքն բանարարել է նորա ընտրութիւնն չընդունիլը . սակայն կրնայ առարկուիլ թէ նա ազգասէր , բանիրուն չէ , յոսի և վնասակար սկզբունքներ ունի , և ինչ : Բայց ազգասիրութիւնն այլ և այլ տեսակէտներով կրնայ նկատուիլ . յաճախ երբ մարդ մը ազգատեսայ է միկուն համար , ազգասէր կը համարուի արիւշի մը համար . երբ անանկը մէկը որ չխորհիք այնպէս ինչպէս կը խորհինք մեր , յանիրաւի ազգատեսայ կը կոչեմք զայն : Ձեմք կարող ուրեմն վճիռ արձակել անմիջապէս թէ նա ազգատեսայ է . այն ատեն ժողովը իւր կարեւորութիւնը կը կորուսանէ . բայց և թաղարներ թէ Թիւլզնտճեան Էֆէնտի իւր մեղ հակառակ կարծիքներ ունեցած լինի . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — [ Ընդմիջելով ] Խընդրէն շեղեցաք , Պէրպերեան Էֆէնտի :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — [ Շարունակելով ] Խնդրոյն մէջն եմ կարծեմ : Կարծիքներու այս զանազանութիւնը կարեւոր չէ՞ միթէ նաև ժողովոյս մէջ , երբ ազգային բարձր խնդիրներու վրայ կը վիճարանուի . զի կարեւոր է յայնժամ որ խնդիրն սրբաբարանուի հակառակ կարծիքներու քննութեան բովէն անցնելով . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — [ Ընդմիջելով ] Կրկին կարողարարեմ Պէրպերեան Էֆէնտի , որ խընդրէն շատ կը հեռանաք . Ձեր այդ խօսքերը մեր խնդրոյն հետ յարարերութիւն չուսին :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Խնդիրը Խորբերդի ընտրութեան վրայ է , և ես այդ խընդրոյն վրայ կը խօսիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բուն սխալնիդ հող է . դուք էք որ կը յարուցանէք այդ խնդիրը :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — [ Շարունակելով ] Սա ալ կը յաւելում թէ պէտք էր ազգային ատենա մը դատած ըլլար զԹիւլզնտճեան Էֆէնտի , որպէս զի նորա յանցաւոր լինելը կամ չը լինելը զիտնայինք . քանի որ դատովճիռ չը կայ և քանի որ ընտրելութեան միւս սոյմաններն ալ կը քրտցնէ , չէ կարելի մերժել նորա ընտրութիւնն : Ի վերջոյ կըսեմ թէ ժողովոյս կը վերաբերի պաշտպան հանդիսանալ այն մեծ սկզբան՝ որ կը կոչուի կարծեաց ազատութեան սկզբունք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կերելի թէ ոմանք խնդիրը չեն հասկցած : Թիւլզնտճեան Էֆէնտի արդի ընտրութիւնն ընդունելու կամ մերժելու վրայ չէ որ խնդիր կը յուզուի : Թիւլզնտճեան Էֆէնտի խնդիր հանած է այս ժողովիս առջև՝ իւր ընտրող և ընտրելի լինելուն նկատմամբ , և այս խնդիրն յանձնուած է ժողովիս առ Նախագահ Սրբազանն ի քննութիւն՝ վարչական Խորհրդոյ ձեռք , և ի տեղեկագրութիւն : Քանի որ ժողովը որոշում չը տնի այն անձին ընտրողութեան և ընտրելութեան նկատմամբ , որոյ ընտրութիւնն իւր վաւերացման պիտի ենթարկի այժմ , պէտք է յիշէ իւր որոշումն , և իւր յանձնարարութեան պատասխանն՝ եթէ ցարդ չէ առած՝ փնտսէ : Ժողովոյն արժանապատուութիւնը զայս կը սրահանջէ , և Գիւանը չկրնար չյիշեցնել զայն Ձեզ :

Եւ արդէն այս ամենուն մէջ Թիւլզնտճեան Էֆէնտի նկատմամբ անհանդիստ ընտղ սրբազայ մ'ալ չկայ , որպէս զի ընդդիմացողը պատճառ մ'ունենան :

Այժմ հարկ է որ վարչական Խորհուրդը կամ նորա Նախագահ Սրբազան Պատրիարք Հայրն ըսէ թէ՛ Թիւլզնտճեան Նիկողոս Էֆէնտի ընտրողութեան և ընտրելութեան իրաւունք

ւանց մասին ժողովիս յանձնարարեալ քննութիւնը կատարեցին , և Թիւլզնտճեան Էֆէնտին իւր այդ անհատական իրաւունքը կը պահէ՞ :

Այսպէսով միայն ժողովոյդ որոշումն յարգուած կը լինի , և Ձեր Գիւանը այն ատեն կրնայ վաւերացման ենթարկել Թիւլզնտճեան Էֆէնտի խօսքով ընտրութիւնը :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — վարչութեան ծանօթագրին վերջին կտորը կարդացէք :

( Ատենապետի Էֆէնտին զայն կրկին ընթեանէ յետոյ ) :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս վերջին կտորը , Հայր Սրբազան , ընդհանուր առում ունի և ընտրելոյ ամենուն մէկէն կը վերաբերի : Այս սոյն սրբաբարութիւնն է որոյ տրամադրութիւնն՝ որ և է անձի երեսօխոսանական ընտրութիւնը վաւերելու համար՝ անհրաժեշտարար պէտք է գտնուի վարչութեան ծանօթագրին մէջ : Ձեր Սրբազանութիւնն ըսել կուզէ թէ այդ սրբաբարութեան տրամադրութեան մէջ պէտք է ըմբանել և Թիւլզնտճեան Էֆէնտի ընտրելութեան հանգամանաց մասին վարչական Խորհրդոյ կարծիքն : Բայց որպէս զի կարենայ հասկցուիլ որ ժողովոյս որոշումը նկատառութեան տուած է , խնդրեմ որ մասնաւորապէս յայտարարէք յատենի աստ թէ՛ Թիւլզնտճեան Էֆէնտի ընտրող և ընտրելի լինելու իրաւունքը կը վայելէ :

Նախագահ Սրբազան կը յայտարարէ թէ Թիւլզնտճեան Էֆէնտի ընտրող և ընտրելի լինելու իրաւունքը կը վայելէ : Հետեւապէս Ատենապետ Էֆէնտին քուէի կը դնէ Խաղաղի ընտրութեան տեղեկագիրը , զոր ժողովը ԿԸ ՎԱԻԵՐԷ միաձայն :

Հետևարար Ատենապետ Էֆէնտի Երեսփոխան ԿԸ ՀՌ-ՉԱԿԷ

ՉՆԻԿՈՂՈՍ Էֆէնտի Թխլոյնտճեան :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Եկեղեցականները կը բամբասէք՝ թէ ամեն խնդիր Պրոպագանդիստներին մէջ կը մտքորեն : Գոհ եմ որ այժմ դուք ալ Պրոպագանդիստ դարձաք :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ձեր Սրբազնութեան յայտարարութիւնն ընել տուա :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէտք է ըսեմ թէ իւրաքանչիւր որ ազատ է ամեն խնդիր իւր մասնաւոր աեսութեան համեմատ նկատելու, բայց Ժողովոյս որոշմանը պէտք է յարգուին և Ժողովը չանարտուի : Մայր Գիւանի պարտքն ալ այս կէտին միշտ նախանձախնդիր լինիլ է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսք կուզեմ, Ատենապետ Էֆէնտի, և կաղաչեմ որ թոյլ տաք ինձ Նախագահ Սրբազնութեան « Պրոպագանդիստներին » խօսքերով ըրած ակնարկութեան սխալ լինելը ցոյց տալու ժողովին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ աւելի կարեւոր խնդիրներ ունի ժողովս զբաղելու և ժամանակն ալ շատ լայն է : Իսկ այս կարգի խնդիրներ չեն արժեր արդէն ժողովոյս ժամերը զբաղել :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԵՏ. — Թիւլոյնտճեան Էֆէնտի խնդրոյն մէջ իմ կարծիքս բացայայտ յայտնած եմ, այսօր իմ խնդակցութիւնս կը յայտնեմ անոր համար որ Ժողովս վեհաձեռնարար վաւերացուց Թիւլոյնտճեան Էֆէնտի ընտրութիւնը, կը շնորհաբար զժողովն որ սղատատուութեան յարգող լինելուն այնպիսի արայայայ մը տուա որ յաջաւորիչ է քաղաքին համար :

ՄԻՋԱԴԵՊ

Հրատարում Ամեն, Պատրիարք Ս. Հօր .

Սոյն պահուն Նախագահ Սրբազան խօսք կառնու Գիւանէն :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Կը յիշէր որ ժողովոյս վերջին շրջանի փակման նստին դրեցի Ձեզ թէ Ապրիլէն վերջն ալ Պատրիարք չեմ յետոյ եկար խնդրեցիք որպէս զի ետ ամենում հրատարակեմ, յայնժամ խոստացայ երկու աւսիս ևս շարունակել պաշտօնս, և այժմ չորս օր կը մնայ սոյն պայմանաժամու քման : Աեսա թի կը ծանուցանեմ թէ չորս օրէն վերջն այլ ևս Պատրիարք չեմ, և կը խնդրեմ որ իմ տեղս ուրիշ մ'ընարէք : Ես անկարող եմ այս պաշտօնն այսուհետեւ ստանելու, և շատ մ'ազ պահասութիւններ ունիմ, զորս Փախաղեան Էֆէնտի կրնայ թուել Ձեզ մի առ մի :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Սրբազան Հայր, ի՞նձ համար կը հրատարիք :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Ո՛չ, իմ կարողութիւնս չնեղէր արդէն պաշտօնս շարունակել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կաղաչեմ, Հայր Սրբազան, որ չնորհ ընէք այսպիսի խնդիր չյարացանելու : Երեսփոխանական նոր ընտրութեամբ Ժողովոյս կազմութիւնն ամբողջանալու պահուն երբ Ձեր Սրբազնութիւնը հրատարականի խնդիր կը ներկայէ, Երեսփոխանը կը ջլատին և Ժողովը կը կասի իւր գործոյ մէջ, Իրաւ է որ ներկայ պարագայից մէջ կարի զբաւորին է Ձեր Սրբազնութեան պաշտօնը, մասնաւոր երբ անձնական տկարութեամբ կը նեղուիք, բայց Ազգին ջերմ փախաբանոց ղեկավարել կարելի չէ Ձեզ նման ազգանուէր անձի մը համար :

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ՆՈՐՈԳ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ

3.

Տեղեկագիր Պալլըքսերի .

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Կեդր. Վարչութեան

Յետագայ հաստատագիրը զոր անցեալ 1880 տարւոյ Հոկտ. ամսոյ 22 թրւականաւ և 23 թուահամարաւ Ժողովոյս կնքովը վաւերացեալ զրկուած էր Ձեր Ամենապատուութեան, այս անգամ ստոյգ ազբուրէ քաղելով որ ցարգ չէ ժամանած, երկրորդել հարկ և արժան համարեցինք :

Կեդրոնատեղւոյդ երեսփոխանի մը ընտրութեան համար նամակ ստացած էինք. նոյն հրամանին համաձայն այս անգամ Գաւառ. Ընդհ. Ժողովն դուժարելով և քսան և մի երեսփոխաններէն տանն վեց երեսփոխանաց ներկայութեամբ ատեան բանալով, նոյն ուղուած մի երեսփոխանի ընտրութեանը ըստ օրինի ձեռնարկեցինք :

Գաղանի քուէիք և քուէից բացարձակ առաւելութեամբ Երեսփոխան ընտրուեցաւ, բնիկ Ակնցի ի Կ. Պօլսոյ Օրթագիւղն բնակող Քօլօլեան Մեծ. Ստեփան Էֆէնտին :

Սոյն ընտրութեան տեղեկագիրն արդ կը փութամբ ներկայացնել Ձեր

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Քանի տարի է վեր հրատարիլ կուզեմ, զիս չէք թողուր. այժմ ևս վերջին խօսքս ըսի և պարտքս ազատեցայ : Մնայք բարեաւ ուրեմն :

Ձայս ատելով, Նախագահ Սրբազան կը մեկնի ժողովատեղիէն :

Երեսփոխանը պահ մը կը շուարին. և սոյն ինչ Ժողովն յուզուելու վրայ էր, Ատենապետ Էֆէնտին ձեռք առաւ օրակարգին շարունակութիւնը :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԵՏ. — Կարգէ դուքս միջադէպ մը տեղի ունեցաւ, Ատենապետ Էֆէնտի : Ս. Պատրիարքը հրատարական կուտայ ու կը մեկնի, թոյլ տուէք գոնէ որ մի քանի Երեսփոխանք երթան Նորին Սրբազնութեան հետ բանակցին ու գործը կարգադրեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ս. Պատրիարք Հօր հրատարականի խնդրոյն ծանրութիւնը կը հասկընամ, Խորէն Սրբազան, ինչպէս նաև կը հասկնամ Ժողովոյս աշխատութիւնն ընդհատելու անպատեհութիւնն :

Այդ ծանր միջադէպին վրայ պիտի խորհրդակցինք անշուշտ : Բայց թողէք, կաղաչեմ, որ Ժողովն սկսած խնդիրն աւարտէ նախ :

Երեսփոխանական նորա ընտրութեանց վաւերացումը ձեռք առած էր Ժողովս, և ամենքս երկու տեղեկագիր ևս կը մնան, զորս պիտի ներկայէ Գիւանը : Այս տեղեկագրերն ալ իրենց որոշումն ընդունելէ յետոյ՝ սկսուած խնդիրը կաւարտի, և Ս. Պատրիարք Հօր հրատարական միջադէպը նկատողութեան կառնուիք :

ՁԱՅՆԵՐ — Այո՛, այո՛, տեղեկագրերը կարդացուին :

Հետևարար օրակարգը կը շարունակուի :

Բարձր Սրբազնութեան ի վաւերացումն  
Որ և մնամք ընդ միշտ նուաստ  
Մառայ Չեր

Ի դիմաց Գաւառական Ժողովոյս  
Նախագահ

Տիմոթեոս եպս. Սափրիչեան

Ատենադպիր Ատենապետ

Կոզմայ Սիրականեան Մ. Սարգիս Միրայիեան

Յաննատագիր Քօլօյեան Ստեփան Էֆենտիի.

Ամենապատիւ Ս. Հայր

Պայքարէսէրի Հայոց կողմանէ Ազգ. Ժողովոյն երեսփոխան ընտրուելու ինձ կը ծանուցանէք, զոր պարտք կը համարեմ ընդունիլ, շնորհակալ ըլլալով նոցա ինձ ցուցուցած վստահութեան և համակրանաց, և նպատակ ունենալով ամենայն հաւատարմութեամբ և անկեղծութեամբ Ազգիս ծառայելու, որով

Մնամ միշտ Չերդ Սրբազնութեան

Ստեփան Քօլօյեան

10 Յունիս 1881

Պայքարէսէրի տեղեկագրոյն վրայ դիտողութիւն ընող չլինելով, Ատենապետ Էֆէնտին բուէի գրու զոյն, որ միաձայնութեամբ ԸնդՈՒՆՈՒՆՅԱԻ Ժողովն:

Հեռուարար Ատենապետ Էֆէնտին երեսփոխան ՀՈՉԱԿԵՑ

Ստեփան Էֆէնտի Քօլօյեան:

4.

Տեղեկագիր Խարբերդի.

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր

Գաւառիս Երեսփոխանական Ժողովրն ընկալաւ Չեր Ամենապատիւ Սրբազնութեան 23 Ապրիլ ամսաթիւ և 157 թուահամար պաշտօնագիրն, որով եազճեան Մեծ. Մ. Յովհան Էֆէնտիի Ազգ. Կեդր. Ընդհանուր Ժողովոյ անդամակցութենէն հրաժարած լինելն ծանուցանելով, կը հրամայէք նորա տեղ փութապէս նորոգ ընտրութիւն կատարել և արդիւնքն հաղորդել Չեր Սրբազնութեան ի տեղեկութիւն:

Ընդ այս պաշտօնագիր Չերումդ Սրբազնութեան Ժողովս նիստ գումարելով ամսոյս 12ին, ի ներկայութեան 20 երեսփոխանաց ատեն բացաւ, և ընտրելեաց եռապատիկ ցանկի մը վերայ գաղտնի քուէարկութիւն կատարելով, 17 քուէից բացարձակ առաւելութեամբ գաւառիս կողմանէ Երեսփոխան ընտրեց ՂԱԿՆԵՅԻ ՄԵԾ. Պետրոս Էֆ. Միաքեան, որ այդը ի Բաղկեղան Կ. Պօլսոյ գտանի արդէն:

Չայս ընտրութիւն Ժողովոյս տեղեկագրելով Չերումդ Ամեն. Սրբազնութեան ի պատշաճ տնօրէնութիւն

Մնամք Չերումդ Սրբազնութեան հարազատ որդիք

Ի դիմաց

Գաւ. Երեսփ. Ժողովոյ Խարբերդու Նախագահ

Յակոբոս եպս. ձգնաորեան

Ատենապետ Ատենադպիր  
Մարտիրոս եաղուպեան Առաքել Տիվիթեան

13 Մայիս 1881

յԱռաջնորդարան, Խարբերդի

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր  
Նախագահ Ազգ. Կեդր. Վարչութեան

Ազգ. Կեդր. Վարչութեան Տնտեսական Տեսչութիւնն իւր պարտաւորութեանն համաձայն կեդրոնական սնտութեանն համաձայն 1880—1881 սահմանադրական տարւոյ հաշուեցոյցն պատրաստելով կը մատուցանէ Չերդ Բարձր Սրբազնութեան, խնդրելով որ հաճի զայն ներկայել Վարչական Խորհրդոյ և Ազգ. Ժողովոյ:

Չերդ Բարձր Սրբազնութեան Տնտեսական Խորհրդական

Գ. Յ. Մէլիք

1 Յունիս 1881

Ի Պատրիարքարանի Հայոց

Ժողովն այս գրոյն բնթերցուած լսելէ ետեւ Ատենապետ Էֆէնտին բուէի կը գնէ խնդրին, և ժողովը ԿՈՐՈՇԷ Համարակալութեան Գիւտնին յղել ի նախաքննութիւն, 80—81 տարւոյ հաշուեկշիւն:

Շարունակութիւն միջադէպի  
Ամեն. Պատրիարք Սրբագանի հրաժարման.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրակարգին մէջ կը մնայ Թաղ. Օրինաց Մրտադրոյն բնութեան շարունակութիւնը. և թէպէտ կէս ժամ ատեն ունինք դեռ ևս, յորում այս խնդրով կրնայինք զրազլլ, բայց քիչ մ'ուռաջ պատահած Ս. Պատրիարք Չոր հրաժարման միջոցէպը կատարել զմեզ վերջ տալ այլ ևս օրակարգին շարունակութեան և այդ հրաժարման դարմանը խորհիլ այն միջոցին մէջ, ուստի կը հրաւիրեմ ՉԵՐԵՍԻՍԻԱՆ այս խնդրոյն վրայ խօսք առնուլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս տեղեկագիրը թերի է. Գաւառական Ժողովոյն քանի՜ անգամէ բաղկացեալ լինելը նշանակուած չէ, և ոչ ալ Պատրիարքարանի Գիւտնատան կողմանէ ծանօթութիւն մը կայ այս մասին:

ԻՅՄԻՐԼԵԱՆ Տ. ՄԱՏ. ԵՊԵՍ. — Տեղեկագրոյն մէջ Գաւառական Ժողովոյ անդամաց թիւը նշանակուած չլինելուն համար շատ անգամ. բայց զորանոց որ Պատրիարքարանն ալ չգիտեր եղեր նորա անդամաց թիւը:

Յիրախի շատ ցաւով է Պատրիարքարանի այս վիճակը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Վարչութեան ըսէք, ինչո՞ւ ճիշդ չէք ըսեր:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Ես ալ կը զարմանամ որ Վարչութիւնն ընտրութեան տեղեկագիր մը կը բերէ հոս՝ առանց նորա օրինաւորութիւնն ստուգելու:

Ատենապետ Էֆէնտին բուէի կը գնէ Խարբերդու տեղեկագիրն, և Ժողովը զայն թերի նկատելով ԿՈՐՈՇԷ միաձայն յղել Վարչութեան յամբողջացումն:

Տ.

Հաշուեկշիւն.

Կեդրոնական սնտուկի 80—81 տարւոյ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրակարգին մէջ խնդիր մի կայ, որ պարզապէս յղել ըլլալով վիճարմանութեան տեղի չտար, կրնար զայն ալ անմիջապէս տնօրինել:

Կեդրոնական սնտուկի 80—81 ի հաշուեկշիւն եկած է Գիւտնիս՝ Տնտեսական Խորհրդական Էֆէնտին մի գրութեամբն, որ կըսէ:

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ս. Պատրիարք Հայրն երբ այսպէս հրատարական կուտայ ժողովոյս ու կը մեկնի, ասոր դարմանը խորհելով որոշում տալու պարտութք, ոչ թէ կէս ժամ, այլ ո՛րչափ հարկը պահանջէ, նոյնչափ երկարելով ժողովոյ այսօրուան նիստն, և խընդիրը լուծելու հնարը գտնելով:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ս. Պատրիարք Հօր պէտք է յիշեցնել թէ՛ երկու ամիս պայմանաժամը, զոր Նորին Սրբազնութիւնն առաջարկած էր ասկից յառաջ, ո՛չ ի Խառնակ իրեն զիմոյ պատգամաւորութենէն ընդունուեցաւ և ո՛չ ալ ժողովէս:

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ — Ճշմարիտ է սակայն քանի որ Նորին Սրբազնութիւնը կը կրկնէ իւր հրատարականն, պէտք է դարձեալ խորհիմք անոր վրայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ պատճառներ և իրաւունքներ կրնամք ունենալ չընդունելու համար Ս. Պատրիարք Հօր հրատարականն, որոց վրայ կրնայ խօսուիլ ի հարկին: Իսկ այժմ Տ. Մատթէոս Եպիսկոպոս կառաջարկէ շարունակել նիստն, մինչև որ Սրբազան Պատրիարք Հօր հրատարականն նկատմամբ հնարաւոր միջոցը գտնեմք: Ուստի նիստը երկարելու մասին ժողովոյ կամբը պիտի հարցնեմ:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊԻՍ. ՆԱՐ ՊԵՏ — Հասկում առաջարկս ի՞նչ էր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձեր Սրբազնութեան առաջարկն ալ տարբեր իմաստ չունէր, կարծեմ:

Ատենապետ Էֆէնտին քուէի դրաւ առաջարկն. և ժողովն ՈՐՈՇԵՑՑ միաձայն շարունակել նիստն և Ս. Պատրիարք Հօր հրատարականին մասին դարման խորհիլ և գտնել:

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Տարակոյս չկայ որ Սրբազան Պատրիարք Հօր հրատարականը միշտ անընդունելի է մեզ համար. բայց մեր ի՞նչ կրնամք ընել ուրիշ, եթէ ոչ՝ մերժել զայդ հրատարականն և խնդրել Նորին Սրբազնութեանէն, որ հասնի ժամանակ մ'ուս շարունակել իւր պաշտօնը, մինչև որ կարենամք կորզողութիւն մ'ընել այս մասին:

ԷՔՍԷՐՃԱՆ Տ. ԷՖ. — Սրբազան Պատրիարք Հայրն ստէպ' կը հրատարիմ կըսէ, առանց անձնական տկարութենէ զատ պատճառները չեմք գիտեր և երբէք չեմք հարցնել զայնս: Իրաւ, Նորին Սրբազնութիւնն առ երեսիս իւր տկարութիւնը պատճառ ցոյց կուտայ միշտ, բայց այդ տկարութեամբ ինչպէս որ կարող եղաւ մինչ ցարդ շարունակել իւր պաշտօնը, կրնայ մէկ երկու տարի ևս շարունակել: Ես կարծեմ թէ Նորին Սրբազնութիւնը տկարութենէ զատ ունի նաև ուրիշ պատճառներ որ միշտ հրատարելու կտրուկն պիտի: Մեր պէտք է հարցնեմք ու տեղեկանամք այդ պատճառներուն և զայնս բառնալու աշխատիմք. առանց ասոր՝ եթէ միայն իւր հրատարականը չընդունիլ որոշեմք, մեր ըրածը շատ հիմնաւոր բան մը չլինիր:

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Կընդունիմ որ Ս. Պատրիարք Հայրն հրատարելու էական պատճառներ ունեցած լինի, բայց չեմ ընդունիր որ զայս հասկնալու մասին ժողովս անտարբեր կեցած լինի: Եղաւ ժամանակ մ'որ ժողովս Ատենապետաց Գիւանին պաշտօնաւոր բանակցելու Նորին Սրբազնութեան հետ՝ իւր հրատարականն պատճառներն իմանալու համար, բայց այս բանակցութիւնն ալ արդիւնք մը չունեցաւ: Ժողովս շարունակ խոստացած է ամեն զխրութիւն ընծայել Նորին Սրբազնութեան, եթէ բարեհաճի յայտնել իւր ցուերն, ժողովոյս 7-8 տարուան ատենադրութիւնքն կը

վկայեն այսմ: Ուստի ևս իւր երեսփոխան, չեմ կարող ընդունիլ թէ ժողովս անտարբեր կեցած է հրատարականի պատճառներն իմանալու: Բայց թէ ի՞նչ ընել հարկ է այժմ, ևս կառաջարկեմ որ անմիջապէս կամ Ատենապետաց Գիւանը կազմուի, և կամ Յանձնախումբ մը կարգուի, և անոր միջոցաւ խնդրուի Նորին Սրբազնութեանէն ժամանակ մ'ուս շարունակել իւր պաշտօնն:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Արդէն նախորդ Ատենապետաց Գիւանը գացած է Ս. Պատրիարք Հօր և իւր բանակցութեան արդիւնքը տեղեկագրած է ժողովոյս. տեսէք թէ ի՞նչ կըսէ այդ տեղեկագրին եզրակացութիւնը: (Եւ կը կարդալոյսն. — տես Ատենագրութիւն Ազգ. ժողովոյ 1881 ամի, ճիստ Ա. երես 15, սխւնակ Բ.) Այժմ եթէ կրկին Ատենապետաց Գիւանը Նորին Սրբազնութեան զրկենք ի բանակցութիւն, նա ալ այսպիսի տեղեկագիր մը պիտի բերէ մեզ, և ինչ արդիւնք որ ունեցաւ առաջին տեղեկագիրը՝ նոյն արդիւնքը պիտի ունենայ և երկրորդն:

Ինչպէս որ յիշեցուցի այժմ, ժողովս այն ատեն իւր Ատենապետաց Գիւանին առաջարկութեամբ՝ յանձնարարեց Վարչութեան որ ներքին զժողովութիւնները բառնալու մասին Սրբազան Պատրիարք Հօր հետ բանակցելով, ճշդեալ առաջարկ մը բերէ. բանի որ Վարչութիւնը մինչև ցարդ չըրաւ զայս, կրկին Ատենապետաց Գիւանը բանակցութեան զրկել օգուտ մը չունի: Պէտք է Վարչութեանն ուղղել իրեն յանձնուած գործը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եղած խօսքերն լսեցիր. տարակոյս չկայ թէ ժողովոյս մէջ չ'դիտի գտնէր Երեսփոխան մ'որ ներկայ պարագային մէջ Ս. Պատրիարք Հօր հրատարականն ընդունելու տրամադիր գտնուի: Ինչպէս Տ. Մատթէոս Եպիսկոպոս բացատրեց, չէ կարելի ենթադրել որ՝ պատրիարքական հրատարա-

կանի խնդիր ելած ատեն՝ ժողովս անտարբեր գտնուած լինի հրատարականն պատճառներն հասկընալու և զայնս բառնալու համար: Բայց և այնպէս եթէ կան Երեսփոխաններ, որ ցարդ ի գործ դրուածներէն մի ուրիշ միջոց ևս ունին ի մտի, թող բարեհաճին յայտնել զայն, որպէս զի կարենամք որոշում մ'առնուլ շուտով, զի արդէն ժամը շատ յառաջ քալած է, և գուցէ քիչ մը ետքը Երեսփոխանաց մի մասը մեկնելու պարտաւորելով ներկայից թիւը նուազի:

ԳԱՓԱՄՍՃԵԱՆ Մ. ԷՖ. — Տ. Մատթէոս Եպիսկոպոսի առաջարկութեան կազմի հասանիլ, բայց դեռ չեմ մտցած նախորդ Ատենապետաց Գիւանի բերած տեղեկագրին: Վարչութիւնը պիտի բանակցէր Ս. Պատրիարք Հօր հետ և տեղեկագիր մը պիտի բերէր մեզ, բայց մինչ ցարդ չըրաւ զայս: Ուստի չեմք կրնար դարձեալ Ատենապետաց Գիւանը Նորին Սրբազնութեան զրկել, որովհետև սա ալ հարկաւ այնպիսի տեղեկագիր մը պիտի բերէ, ինչպէս որ բերաւ իւր նախորդն: Այս կէտերը լաւ բացատրեց Գրիստոստոս Էֆէնտին: Սակայն ի՞նչ են այն պատճառներն որ ցաւ կազդեն Նորին Սրբազնութեան և զինքը հրատարելու կտրուկն, զայնս բառնալ հարկ է: Ուստի Տ. Մատթէոս Եպիսկոպոսի առաջարկութեան համեմատ, որուն ոյժ կուտամ, պէտք է Մատենապետ մը կազմուի որ երթայ Նորին Սրբազնութեան ազաչէ շահել իւր հրատարականին վրայ, խոստանալով որ իւր հրատարականն պատճառներն պիտի բարձուին ի միջոց, եթէ բարեհաճի յայտնել զանանք:

ԷՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Ես կընդունիմ Մատենապետի կազմութեան առաջարկութիւնը, սակայն սակ անոր համար չէ որ այդ Մատենապետին երթայ աղաչէ պաղտափ զՆորին Սրբազնութիւնն՝ իւր հրատարականն ետ առնելու: Նորին Սրբազնութիւնն անշուշտ գաղտնի պահած պատճառ ունի հրատարելու և թերևս

այնպիսի պատճառ զոր չուզէ յայտնել բա-  
յարձակ : Աւստի Յանձնախումբն այն պայմա-  
նաւ կազմելու է որ՝ հրաժարման ներքին ,  
գաղանի պատճառներն խոյ խմանայ , և նոցա  
զարմաններն առաջարկէ Ժողովոյս :

**ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ.** — Ատենապետաց  
Գիւանի տեղեկագիրը՝ զոր Քրիստոստոր է-  
ֆէնտի կարգայ՝ մեզ ընդունել տուած է թէ  
Ս. Պատրիարք Հայրը ներքին գծուարութիւն-  
ներէ վերժ չէ . անոր համար էր որ յանձնա-  
բարուեցաւ Վարչութեան որ բանակցի Նորին  
Սրբազնութեան հետ և այդ ներքին գծուարու-  
թիւնքն բաճաւու միջոցներն Ժողովոյս հա-  
ղորդէ : Ես կը կարծեմ թէ այս որոշման գոր-  
ծադրութեան ուշանալն պատճառ եղած է  
Նորին Սրբազնութեան կրկին հրաժարելուն :  
Ուստի եթէ Ատենապետաց Գիւանը կրնայ խ-  
կոյն կազմուիլ , այս խնդիրն անոր յանձնեմը  
եթէ ոչ՝ Յանձնախումբ մ'ընտրեմք որ երթայ  
Ս. Պատրիարք Հայր հետ բանակցի , հրաժարման  
պատճառներն խմանայ և ապահովէ զՆորին Սրբ-  
բազնութիւնն որ ներքին գծուարութիւնքն պիտի  
բարձուին . և եթէ այդ Յանձնախումբն չը  
կրնար հրաժարման պատճառներն գրաւոր Ժո-  
ղովոյս հաղորդել , զանէ պէտք է այդ գծուա-  
րութիւնքն բաճաւու համար հարկ եղած մի-  
ջոցներն տեղեկագրէ մեզ :

**Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ** — Երբ մեր նա-  
խորդ որոշումը չեմք յիշեր , ստորակոյս չկոյ  
որ շատ գծուարութեանց կը հանդիպիմք . բա-  
նի որ նախորդ Ատենապետաց Գիւանին տե-  
ղեկագրոյն եզրակացութիւնը Վարչութեան  
յղուած է ի գործադրութիւն և ցարգ պատաս-  
խանը չէ եկած , չեմ կրնար ընդունիլ Տեղեմար  
էֆէնտի այն առաջարկը թէ՛ կազմուելիք  
Յանձնախումբը պաշտօն ալ անենայ հրաժար-  
ման գաղանի պատճառներն խմանալու և գոր-  
մաններն տեղեկագրելու : Ես գծուարու կը  
հաստատմ որ այդ Յանձնախումբն այնչափ

տեղեկակ լինի գործայ միճակին , որպէս զի կա-  
րենայ զանէ այդ պատճառաց բարձման գար-  
մաններ գանել , և անչուշտ այս նախապետ-  
ութեամբ էր որ Ատենապետաց Գիւանը կառու-  
չարկէր Վարչութեան յանձնել այդ պաշտօնը :  
Ուստի մեր պարտքն է զստնալ մեր որոշման .  
Վարչութեան յանձնարարուածը նորէն յանձ-  
նարարել իրեն : Եթէ Ս. Պատրիարք Հայր հրա-  
ժարման պատճառներն գաղանի են , կրնայ  
զանիտակ նախ մը մէջ յայտնել զանոնք : Ասկէ  
տեղի կարձ և օրինաւոր ընելիք մը չուրիմք  
մեր :

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Տ. Մատթէոս  
Սրբազան լաւ խօսեցաւ . ևս ալ Ժողովոյս առ-  
ջի որոշումը յիշեցնելու համար էր որ Ատե-  
նապետաց Գիւանի տեղեկագրոյն եզրակացու-  
թիւնը կարդայի . ինչպէս Գարագաշեան է-  
ֆէնտի կարծեց , շատ հաւանական է որ այդ  
որոշման չգործադրուելուն համար Ս. Պատ-  
րիարք Հայրը կրկին կը հրաժարի այժմ : Ուստի  
յանձնարարելու է Վարչութեան որ իրմէն ուղ-  
ուած պատասխանը շուտով բերէ , և ուրի  
ոչէն նիստ գումարուի զայն ի նկատ առնլու  
համար :

**Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ ՊԷՅ** — Ես մաս-  
նախումբն չեմ ընդունիր , այլ կրնդունիմ պատ-  
գամաւորութիւն մ'որ Ժողովոյս փափաքը ներ-  
կաէ Նորին Սրբազնութեան : Բայց կը զարմա-  
նամ թէ ինչպէս կը լինի որ Վարչութիւնը՝  
գիտնալով հանդերձ թէ Ս. Պատրիարք Հայրն  
երկու ամիս պայմանաժամաւ ետ առեր է իւր  
հրաժարականը , չիտեթար անօրինել ինչ որ  
պէտք է : Շատ իրաւացի խօսեցան մի քանի  
երեսիօրանք . անկարելի է այս խնդիրն ու-  
րիշ կերպիւ լուծել՝ բայց եթէ Վարչութեան  
կարծիքն իմանալով Վարչութիւնը միշտ Պատ-  
րիարք Սրբազանին գործակից է , ուստի բնա-  
կան է թէ նորա կարծիքն աւելի արժէք ու-  
նենայ այս մասին՝ քան մեր անհատական մը-  
տածումները : Արդ , որպէս լու է Վարչու-

թիւնն որ իրեն եղած յանձնարարութիւնն ընդ  
փոյթ կատարէ և 8 օրէն պատասխանը բե-  
րէ : Միւս կողմանէ պատգամաւորութիւն մը՝  
կամ եթէ կուզէք բոլորս միատեղ՝ երթալք  
ազաչել զՆորին Սրբազնութիւնն , սինդել և  
պահանջել որ շարունակէ իւր պաշտօնը զէթ  
մինչեւ որ Վարչութիւնն իւր պատասխանը  
բերէ :

**Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ.** — Յանձնա-  
խումբի տեղ պատգամաւորութիւն կառաջար-  
կէ Նորին Սրբազան . ևս կընդունիմ այս բա-  
րեփոխումը :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Ինդիրը բաւական  
պարզուեցաւ . բայց տակաւին խօսք ու-  
ղած են Սուրբնեան եւ Խիէքճեան էֆէնտիք .  
կուզէ՞ք զանոնք ալ լսել :

**ԶԱՅՆԵՐ** — Այո՛ , թող խօսին :

**ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ.** — Շատ ժամանա-  
կէ ի վեր է որ ժամանակին անձկութիւններն  
կատրոյն մեր Սրբազան Պատրիարք Հայրը յա-  
ճախ հրաժարական տալու : Գիտէք որ 1873—  
76 էն ի վեր Նորին Սրբազնութիւնը կենսական  
խնդրով մը կըբաղի , այն է հայաբնակ դաւա-  
նաց բարենորոգման խնդրով . ինքն յօժարա-  
կամ յանձն առած է զայն , իւր բոլոր ջանքն  
և ուշադրութիւնն անոր նուիրած է , և կար-  
ձեւ ոչ ոք քան զինչն ծանօթ կը գտնուի  
խնդրոյն : Ս. Պատրիարք Հայրը յատենի Ժո-  
ղովոյս խոստացած է ամեն աշխատութիւն յան-  
ձնն առնուլ , սոյն խնդրոյն յաջողութեան հա-  
մար . ինք ոգի ի բոլին աշխատած է այս ազ-  
գային կարեւոր խնդրոյն համար և Օսմ բա-  
րեփոխմ կառավարութիւնն ալ անոր կարեւո-  
րութիւնն ընդունելով . հաշտ աչօք նայած է  
Նորին Սրբազնութեան աշխատութեանց : Ես  
չեմ կարող նկատել թէ այնպիսի ժամանակի  
մը մէջ՝ յորում այդ մեծ խնդիրն իւր ամենա-  
փափուկ միճակին մէջ կը գտնուի՝ Երեսիօրա-  
նաց մէջ պիտի գտնուի մէկն որ Ս. Պատրի-

արքին հրաժարականն ընդունելու տրամադիր  
լինի : Նորին Սրբազնութիւնն երբ քանի քանի  
անգամներ հրաժարական տուած է , թերեւ  
իւր հրաժարման բուն պատճառները չեն ճանչ-  
ցուած , սակայն միշտ Ազգը պատուած է  
զինքն իւր վստահութեամբ : Սրբազան Պատ-  
րիարք Հայրը՝ ամենքնիս ալ կրցած ենք մա-  
կարերել որ ժամանակին նեղ պարագայներն  
առ ոչինչ համարելով տիւ և ցերեկ անընդ-  
հատ և շարաչար աշխատած է՝ հակառակ  
իւր անձնական վատաոգջութեան : Ենք գոր-  
ծոց շատ աւելի հմուտ եւ փորձառու է , պե-  
տական անձանց հետ անընդհատ յարաբերու-  
թեան մէջ լինելով , զահլիճներու քաղաքա-  
կանութեանց հասու եղած է : Այսպիսի պա-  
րագաներու մէջ Ս. Պատրիարք Հայրը հրա-  
ժարական կուտայ , Թէ՛ ինչ է այս հրաժար-  
ման պատճառը , Նորին Սրբազնութիւնը կըսէ  
թէ , ինչպէս Ատենապետաց Գիւանի տեղե-  
կագրէն կ'իմանալք , Պատրիարքները ներքին  
գծուարութիւններէ զերծ չեն : Սակայն ներ-  
քին գծուարութիւնք միթէ բաւական պատ-  
ճառ կրնան համարուիլ հրաժարման : Երբէք  
ես , ինչպէս և ոչ մէկ երեսիօրան , չեմ  
կրնար մտքէս անցնել թէ Նորին Սրբազնու-  
թիւնն առ ոչինչ չպիտի համարի այդ գծուա-  
րութիւնքն և Ազգին թախանձանաց զիջանե-  
լով չպիտի ուղէ իւր ստանձնած գործը շա-  
րունակել : Եթէ Նորին Սրբազնութիւնն պի-  
տի ընկրիլ և հրաժարական տայ , ազաչեմք  
զինքն որ դասալիք չլինի , և ամենայն վըս-  
տանութեամբ իրեն յանձնեմք վերստին իւր  
ստանձնած գործոյն շարունակութիւնը : Գու-  
ցէ նոր եկող Պատրիարքը սխալներ գործէ ,  
մինչեւ որ փորձառու լինի :

Ուստի խնդրեմք Նորին Սրբազնութեանն որ  
փոխանակ ներքին գծուարութիւնքն խնդիրը  
նեղու , ետ առնու իւր հրաժարականն՝ վստա-  
լիւնելով որ Ազգ . Ժողովն պիտի գնահատէ իւր  
ժանրածանր աշխատութիւնքն և պիտի ջանայ  
թեթեւել զայնս . զի ներքին գծուարու-  
թիւնը վերջ չեն գտներ երբէք , և միշտ նո-  
բանոր գծուարութիւններ յերեւան կուգան :  
Մեք իր անձնութիւնն ու փորձառութեան



վրայ կատարեալ վստահութիւն ունիմք, եւ եթէ ինք չուզեր դատաւիբ նկատուիլ, պէտք է իւր պաշտօնը շարունակէ: Ուստի քանի որ ներքին դժուարութիւնքը բառնալ անկարելի է, եւ քանի որ նորին Սրբազնութիւնն անձնազոհութիւն խոստացած է, մեք պատգամաւորութեան մը միջոցաւ իւր ազգասիրութեանը դիմելու եւ խնդրելու եմք որ հաճի իւր պաշտօնը շարունակել: Այո՛, կամ ետ առնելու է իւր խոստումը եւ կամ շարունակելու է իւր պաշտօնը:

ԻՓԵՔՃԵԱՆ Է. ԷՖ. — Ես պարզ դիտողութիւն մ'ունիմ: Կը տեսնեմ որ Ազգ. ժողովոյն եւ Ս. Պատրիարք Հօր մէջ անհամաձայնութիւն մը տեղի ունեցեր է: Ատենապետաց Գիւսանի տեղեկագիրն եզրակացուցած էր թէ՛ Ս. Պատրիարք Հօր հրաժարականն անընդունելի է. միւս կողմանէ առաջարկած էր որ Վարչութիւնը՝ նորին Սրբազնութեան հետ համախորհուրդ՝ ճշդեալ առաջարկ մը բերէ ժողովոյն, եւ ժողովը զայն ուղարկութեան առնու: Սակայն, ինչպէս կը յիշեմ, Ս. Պատրիարք Հայրը ժամանակի խնդիր յարուցած էր, երկու ամիս եւս պաշտօնս կը շարունակեմ ըսելով: Այս պարագային մէջ ժողովս զանցառութիւն մ'ըրած է: Քանի որ Ս. Պատրիարք Հայրը յայտարարած եւ պնդած է թէ երկու ամիս եւս ժամանակ կուտայ ժողովոյս, միթէ պէտք չէ՞ր սպասել որ այս դժուարութիւնք տեղի պիտի ունենային, եւ պէտք չէ՞ր որ Մայր Գիւսանը Վարչութեան գիմէր եւ ճշդեալ առաջարկ մը բերելու որոշումը գործադրել տար: Ասի, կարծեմ, շատ դժուար բան չէր. ուստի եւ այդ առաջարկը մինչ ցարդ եկած ըլլալու էր: Արդ, կըսեմ թէ Ազգ. ժողովը սխալմը գործած է. քանի որ ինքը Վարչութեան բերելիք առաջարկն ստիպողաբար նկատողութեան պիտի տանուր, պէտք էր Վարչութեան ստիպողաբար պահանջէր զայն, որպէս զի մեք ալ այժմ այս ժամանակի կորուստը չունենայինք: Ուստի կանոնաւոր գործ տեսնելու համար կառաջարկեմ ազգայն Ս. Պատրիարք Հայրն որ ժամանակ մ'եւս շարունակէ իւր պաշտօնը, եւ մեք

միեւնոյն ժամանակ բանակցինք Վարչութեան հետ՝ ճշդեալ առաջարկ մը բերելու մասին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մայր Գիւսանը պատշաճ զատելու Իփէկճեան Էֆէնտիի ակնարկութեան նկատմամբ բացատրութիւն տալ այժմ: Իօսքը Տէր Մատթէոս Եպիսկոպոսինն է:

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ — Շատ ճշմարիտ կը լինէր Սուրէնեան Էֆէնտիի այն յայտարարութիւնը թէ՛ դարձեալ վստահութեամբ Ս. Պատրիարք Հօր յանձնուի իւր ստանձնած խնդիրն, եթէ արդէն ըրած չլինէինք զայն: Մեր ատենագրութիւնը կը վկայեն թէ՛ Ազգ. ժողովը քանի քանի անգամ այդ խնդիրը վստահութեամբ յանձնարարած է նորին Սրբազնութեան, եւ երբ Խորհրդարանական Յանձնախումբն իւր պաշտօնէն հրաժեշտ տուաւ, այս խնդիրը դարձեալ իրեն յանձնուեցաւ: Ս. Պատրիարք Հայրը՝ երբ 1879 Օգոստ. 10ին ետ առաւ իւր հրաժարականն, այն անգամ եւս իրեն յանձնարարուեցաւ այդ խնդրոյն անօրինութիւնը: Ժողովը երբէք անվստահութիւն յայտնած չէ իւր Պատրիարքին վրայ, ուստի եւ զայս խնդիր ընելու հարկ չկայ: Մեր այս օրուան խնդիրը՝ Ս. Պատրիարք Հայրն իւր աթոռոյն վրայ պահել է. այս է միայն մեր ամենուն փափաքը:

Քանի որ ժողովս Ազգին իղձերը ներկայացնելու եւ անոնց իրացման աշխատելու գործը Ս. Պատրիարք Հօր յանձնարարած է կատարեալ վստահութեամբ, պէտք չեմ տեսներ այս խնդրոյն վերադառնալու, ըստ որում այս մասին խնդիր չկայ յարուցեալ: Ժողովը պէտք է իւր որոշման դառնայ եւ հրաժարման պատճառներն քննէ. Ս. Պատրիարք Հայրն ազգային քաղաքական խնդիր պատճառ ցոյց տրուած չէ իւր հրաժարման, որպէս զի այս մասին բան մ'ըսելու տեղի ունենաւ: Արդ՝ կեզրակացնեմ ըսելով թէ՛ մէկ կողմանէ խնդրեմք Ս. Պատրիարքէն որ հաճի շարունակել իւր պաշտօնն՝ եւ միւս կողմանէ՝ աշխատելը բառնալ այն դժուարութիւնքն՝ որ նորին Սրբազնութեան հրաժարման պատճառ եղած են:

ՁԱՅՆԵՐ. — Քուէ՛, քուէ՛:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դեռ եւս խօսք ուղղներ կան. բայց արդէն մինչ ցարդ եղած վիճաբանութիւններէն հասկցաք թէ ոչ ոք ի մէջ Ս. Պատրիարք Հօր հրաժարականն ընդունելու կարծիք ունի, եւ թէ ամեն առաջարկ հրաժարականն յետս կոչել տալու կը յանգի: Ամենէն վերջի առաջարկն, որ միւսներուն ողորմելի իւր մէջ կամփոփէ, պատգամաւորութիւն մը զրկել է Ս. Պատրիարք Հօր, խնդրելու համար որ յետս կոչէ իւր հրաժարականն, եւ միւս կողմանէ պահանջել՝ որ Վարչութիւնն ընդ փոյթ բերէ ժողովոյս իրեն յանձնարարութեամբ ճշդեալ առաջարկն ի թէ խօսից կարգին մէջ նշանակեալք այս առաջարկութեան ողորմելի զէմ պիտի խօսին, խօսք տամ իրենց. իսկ եթէ չպիտի ընդգիծմաբանեն, աւելորդ ժամավաճառութիւն մ'ըրած կըլլամք, կարծեմ:

ՁԱՅՆԵՐ. — Քուէ՛, քուէ՛:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես դէմ պիտի խօսիմ: Շատ մ'անտեղի կարծիքներ յայտնուեցան եւ անպատասխանի մնացին. բայց այժմ առաջարկութեան վրայ խօսիմք:

Մէկ կողմանէ պատգամաւորութիւն զրկել Ս. Պատրիարքին եւ միւս կողմանէ Վարչութեան ըսել թէ՛ քեզ եղած յանձնարարութիւնը կատարէ, ասի սխալ մը կը լինի: Վասն զի եթէ Ս. Պատրիարքը Վարչութեան հետ համաձայն է եւ այդ կողմէն իւր հրաժարման պատճառ չկայ, ինչո՞ւ համար պայման դնեմք որ Վարչութեան բերելիք ճշդեալ առաջարկն ի նկատ պիտի առնուի. իսկ եթէ Պատրիարքին եւ Վարչութեան մէջ անհամաձայնութեան խնդիր կայ, պէտք է այսօրուրնէ անվստահութեան քուէով Վարչութիւնը տապալելք եւ ըսեմք Ս. Պատրիարքին որ նոր Վարչութիւն մը կազմէ:

Հարկ չկայ Վարչութեան հարցնելու թէ՛ ինչ է քու կարծիքդ: Մեք ներսէս Սրբազանին Պատրիարք մնալը կուզեմք Ազգին օգտին համար. խնդիրը հոս է ահա եւ ասկէ անդին

անցնիլ աղէկ չէ: Բայց ցաւալի է որ Վարչութիւնը ներկայացուցիչ մը չունի հոս, որպէս զի եղած հարցմանց պատասխանէ. վասն զի եթէ Ս. Պատրիարքին եւ Վարչութեան մէջ խնդիր կայ, պէտք է երեւան ելնէ: Եզրակացնելով խօսքս, ես չեմ ընդունիր պատգամաւորութիւն մը կազմել պարզապէս, որ հրաժարականը յետս կոչել տալու պաշտօն պիտի ունենայ միայն, ես յանձնախումբի կազմութիւնը կընդունիմ, որ աւելի ընդարձակ պաշտօն մ'ունենայ:

ՁԱՅՆԵՐ. — Քուէ՛, քուէ՛:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէպէտ խօսք ուղղ երեսփոխանք կը պնդեն որ իրենց խօսք տամ, բայց միւս կողմէ քուէ կը ձայնեն բազմաթիւ նստարաններէ: Ասկից զատ կը դիտեմ որ խընդրոյն վրայ երկու անգամէն պակաս խօսող Երեսփոխան զրեթէ չմնաց խօսք ուղղներուն մէջ. ուստի այլ եւս խօսք տալու համար դժուարութիւն պիտի կրեմ:

Ինչպէս ամենքդ ալ լաւ հասու եղաք, Ս. Պատրիարք Հօր հրաժարականը մերժելու համար բոլոր Երեսփոխանք համաձայն են. բայց թէ ինչ տեսակէտով մերժելու է, այս մասին կարծիքները կը տարբերին: Սակայն ժողովոյդ առաջին որոշելի կէտը հրաժարականի խնդիրն է. այնուհետեւ պիտի որոշէ թէ ինչ եզրանակաւ եւ միջոցաւ Ս. Պատրիարք Հօր պիտի հաղորդուի խնդիրն: Ուստի նախ վիճաբանութեան փակումը քուէի պիտի դնեմ:

Ատենապետ Էֆէնտին ժողովոյ քուէն կը խնդրէ, որ ինչ զէմ՝ ստուար մեծամասնութեամբ վիճաբանութիւնը փակել ԿՈՐՈՇԷ:

Հետեւաբար Ատենապետ Էֆէնտին քուէի կը դնէ Ս. Պատրիարք Հօր հրաժարականն, եւ ժողովը միահամուռ ԿԸ ՄԵՐԺԷ զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Աւասիկ ժողովը միահամուռ կը մերժէ Տ. Տ. Ներսէս Ս. Պատրիարքին հրաժարականն:

Արդ՝ կը մնայ որոշել թէ՛ ժողովոյ սոյն որոշումն ինչ միջոցաւ պիտի հաղորդուի Նորին Արքայութեան :

Այս մասին երկու առաջարկութիւն կային, յանձնախմբի եւ պատգամաւորութեան : Յանձնախմբի առաջարկին հեղինակն՝ Տ. Մատթէոս Եպիսկոպոս՝ համաձայնեցաւ Տ. Խորէն Արքեպիսկոպոսի բարեփոխման, որ պատգամաւորութիւն կառավարէր. եւ ի վերջոյ Փափաղեան Էֆէնտի միայն Յանձնախմբին առաջարկութեան վրայ պնդեց, բայց կրկնող չունեցաւ : Ուստի միայն պատգամաւորութեան առաջարկը կը մնայ մեզ քուէարկելի, եւ այդ պատգամաւորութեան համար Դիւանը կառավարէ Զեղ հետեւեալ վեց Երեսփոխաններն :

- Տ. Խորէն Արքեպիսկոպոս
- Տ. Գրիգորիս Եպիսկոպոս
- Տ. Յովհաննէս Քահ. Մկրտան
- Կ. Ս. Իսթրաքեան Էֆէնտի
- Տօքթ. Թիրեաքեան »
- Ա. Սուրէնեան »

Ատենապետ Էֆէնտի ժողովոյ քուէին կենթարկէ այս ցանկն, եւ ժողովն՝ ամբողջապէս ընդունելով զայն՝ կ'ընՏԻ՛ պատգամաւորութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պատգամաւորութիւնն ընտրուեցաւ, որոյ պաշտօնն է հաղորդել Ս. Պատրիարք շօր՝ թէ Արդ. ժողովն իւր միահամուռ քուէովն մերժած է զիւր հրաժարական, եւ թէ կը փախաքի ջերմագին պատրիարքական աթոռոյն վրայ պահել զինքն :

Կաղաչեմ պատգամաւորութեան անդամներն որ իրենց պաշտօնն անյապաղ կատարել բարեհաճին : Արդէն լսեցին եւ զիտեն այն ամեն խօսք եւ կարծիք, որք յատենի աստ յայտնուեցան. ուստի աւելորդ է իրենց մանրամասն հրահանգ տալ, եւ իրենց իմաստութեան կը թողուի արժան եղած ձեւն ու ոճն ի գործ ածել, ժողովոյս որոշումն Նորին Արք.

բաղնութեան հաղորդելու եւ հրաժարականն յետս կոչել տալու համար :

Ասանցմէ զատ՝ ժողովոյ վիճարանութեանց մէջ խնդրոյն յարակից կէտ մ'ալ կար :

Ատենապետաց Դիւանի տեղեկագրոյն եղբակացութիւնը Վարչութեան յղուած էր, բայց պատասխանը չէր եկած. ոմանք այդ պատասխանը խնդրել ուղեցին, իսկ այլք աւելորդ նրկատեցին : Արդ զխանալ պէտք է թէ պիտի խնդրե՞մք Վարչութեանէն առ ինքն եղած յանձնարարութեան պատասխանը, թէ ոչ :

ԶԱՅՆԵՐ — Այո՛, այո՛ :

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ — Վարչութեան ինչ որ կը յղուի, պէտք է պատասխանը դայ հոս :

Ատենապետ Էֆէնտի ժողովոյ մեծամասութեան արամադրութեան համաձայն կը յայտարարէ թէ, Պատրիարքական հրաժարական աթիւ՝ ներկայ տարեշրջանի Ա. նստին մէջ՝ Վարչութեան յանձնարարեալ խնդրոյն պատասխանը պիտի խնդրուի Վարչութեանէն :

Ատենը կը փակուի ի ժամ 6 1/2, յառաջիկայ նիստն 8 օրէն գումարելու պայմանաւ : Եւ պատգամաւորութիւնն անմիջապէս կը մեկնի երթալ Ս. Պատրիարքին մօտ, իւր պաշտօնը կատարելու համար :

Ատենաղայիր Ատենապետ  
Մ. ԶՊԱՆԵԱՆ Զ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ

ԱՐԻՈՅ


30

սժ . . . . .	413.304	50		
. . . . .	850.681	32 1/2	963.982	82 1/2
. . . . .			108	37 1/2
			964.094	20

Ի ճշգրութեան

Էդր. Վարչութեան Տնտեսական Խորհրդական

Գ. Յ. ՄԵԼԻԻԲ



# Հ Ա Շ Ո Ւ Ե Ց Ո Յ Ց

## ՎԵՒՐՈՆԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԻ 1880-81 ՏԱՐԻՈՅ

### ՎԻՃԱԿ 1880 ԱՊՐԵԼ 30

Նախորդ տարիների մնացած պարտքեր Սակեցից չստ.	299,853.60 671,321.60 881,180.20	Նախորդ տարիների մնացած սակեցից Սուսուկ պարտքներ չստ.	81,463.37 1/2 11,62 1/2 881,180.20
--	-------------------------------------	---	---------------------------------------

### ՀԱՏՈՒԵՄԻՄ

Հնդանոց ծախք 1880-81 տարուց		Նախորդ վեճիկ թանկաց չստ խաչ	
Սահմանադրված Երազան Պատրիարք	60,000		674,321.60
Պատրիարքարանի պաշտակներ	803,951		
Նրանով սակավան եկեղեցու պաշտակներ - Պեղիկի Տ. Սարգսու Նոյ	1,500		
Պատրիարքարանի Կաթնասրահի Կաթնասրահի Կաթնասրահի	945		
Հիմնականում ծախք - Հանձնարարի կնիք և Կաթնասրահի կաթնասրահի	65,890.50		
Պատրիարքարանի ծախք - Կրթական Տնօրենի պաշտակներ	15,921		
Կաթնասրահի պաշտակ - Կրթական Տնօրենի պաշտակներ	4,165.50		
Կրթական ծախք - Կրթական պաշտակ	4,650		
Սպիտակասրահ և Կաթնասրահ	10,970		
Կաթնասրահի ծախքներ	9,551.37 1/2		
Տնօրենի ծախք	2,448.75		
Սպիտակասրահի	6,263		
Սպիտակասրահի և Կաթնասրահի ծախքներ	18,179.50		
Տնօրենի պաշտակի ծախքներ	16,083.25		
Սպիտակասրահի	939		
Հնդանոց ծախք - Կաթնասրահի	4,785		
Կաթնասրահի և Կաթնասրահի	9,231.87 1/2		
Հանդիմանողի ծախքներ	1,728.50		
Փայտ, սեփական սուրճ և այլք	7,314.76		
Սպիտակասրահի և այլք	5,829.40 1/2		
Սպիտակասրահի	4,289.58		
Կաթնասրահի ծախք - Սպիտակասրահի և Կաթնասրահի	477		
Սպիտակասրահի	675		
Տնօրենի և Կաթնասրահի պաշտակներ	483		
Վառ զրամական	4,072.12 1/2		
Հասկի սակի և այլքի ծախքներ	2,656	450,233.50	
Հանձնարան պարտավանք 80-81 տարուց			
Սուղասրահ	91,845.50		
Կաթնասրահ	43,400		
Հանձնարան պարտավանք	5,386		
	143,301.50		
Հանձնարան պարտավանք, նախորդ տարիների սակեցից	850,681.32 1/2	83,982.82 1/2	
Սուսուկ		108.37 1/2	
		1,411,321.70	
			674,321.60
			Հնդանոց խաչք 1880-81 տարուց
Կեղևանի սուրճ	103,806.25		
Սուսուկարանի վեճիկների թանկացից պայման	103,000		
Կ Կաթնասրահի եկեղեցիների թանկացից ծախք	20,000		
Կաթնասրահի Կրթականի - Սուսուկի Կրթականի	103,400		
Սուսուկի Կաթնասրահի և Կաթնասրահի	31,956		
Սուսուկի Կաթնասրահի Կաթնասրահի	67,875		
Կրթականի Կաթնասրահի	18,380		
Սուսուկի Կաթնասրահի և Կաթնասրահի	12,304.50		
Սուսուկի Կաթնասրահի և Կաթնասրահի	6,031 1/2		
Հանձնարանի ծախքներ - 164 Լ. 0. 17644			
Հանձնարանի ծախքներ - 121 Լ. 0. 13288			
Սուսուկի Կաթնասրահի	36,910.50		
Կաթնասրահի	4,300		
Հանձնարանի Կաթնասրահի	3,093		
Հանձնարանի Կաթնասրահի	6,055.50		
Սուսուկի Կաթնասրահի և Կաթնասրահի	2,088.62 1/2	517,490.37 1/2	
Հանձնարան պարտավանք 1880-81 տարուց			
Սահմանադրված Երազան Պատրիարք	5,000		
Պատրիարք	18,979.50		
Պեղիկի Տ. Սարգսու թանկաց	450		
Պատրիարքարանի	835		
Կրթական Սուսուկարանի Կաթնասրահի սակավան	100		
Կրթական Կաթնասրահի պաշտակներ	2,340		
Սպիտակասրահի և Կաթնասրահի	2,460		
Սպիտակասրահի և Կաթնասրահի	2,049		
Սուսուկի Կաթնասրահի և Կաթնասրահի	2,000		
Սուսուկի Կաթնասրահի և Կաթնասրահի	3,210		
Սուսուկի Կաթնասրահի և Կաթնասրահի	4,320		
Սուսուկի Կաթնասրահի և Կաթնասրահի	4,320		
Սուսուկի Կաթնասրահի և Կաթնասրահի	3,210		
Սուսուկի Կաթնասրահի և Կաթնասրահի	3,210		
Սուսուկի Կաթնասրահի և Կաթնասրահի	2,460		
Սուսուկի Կաթնասրահի և Կաթնասրահի	5,437		
Սուսուկի Կաթնասրահի և Կաթնասրահի	2,581.50		
Հանձնարան պարտավանք	65,363		
Հանձնարան պարտավանք, նախորդ տարիների պարտքեր	671,321.60 72 1/2	222,803.72 1/2	
	1,411,321.70		1,411,321.70

### ՀԱՏՈՒ ԵՒ ԶԻՆ

Ներկայ տարուց գործարկված ընդհանուր ծախք	150,233.50	Նախորդ վեճիկ թանկաց չստ խաչ	671,321.60
Սակեցից չստ խաչ	711,287.47 1/2	Ներկայ տարուց գործարկված ընդհանուր Կաթնասրահի	517,490.37 1/2
			1,491,530.97 1/2

### ՆԵՐՄԱՆՑ ՎԻՃԱԿ 1881 ԱՊՐԵԼ 30

ՉՈՒՑԻ - 1880-81 տարուց միջ զարգացած	65,363	ՉՈՒՑԻ - 1880-81 տարուց միջ զարգացած	113,301.50
Նախորդ տարիների մնացած	671,321.60 72 1/2	Նախորդ տարիների մնացած	850,681.32 1/2
Սակեցից չստ խաչ	711,287.47 1/2	Սուսուկ	108.37 1/2
			961,091.20

(1) Վառ զրամական հաշվառումը 4072 1/2 զրև 6000 զրև եկեղեցու 878-79 տարուց Սուղասրահի և այլն թանկաց կնիք է. որի սակավանքը 70 զրամ է. և այն սակավանքի թանկացումը 300 զրև 6000 զրև պատճեն հաշվառում էր. սակավանքը Սուղասրահի ոչ զրամ թանկացումը Թանկացումից մինչև այն Կաթնասրահի և Կաթնասրահի Կաթնասրահի ծախքները և այլն և այն զրամ հաշվառումից մինչև այն գործարկված սակավանքը և այլն ներկայ ընդհանուր միջ զարգացումը.

**Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ Վ.Ա.ՐԶՈՒԹԻՒՆ**

Կրօնական գործոց խորհրդական Գեր. Տ. Սիմօն Եպիսկոպոս Սէֆէրեան  
 Ներքին գործոց » Տիգրան Էֆէնտի Եռասուֆեան Առէն-դէր  
 Յարաբերական գործոց » Միքայէլ » Մօմճեան  
 Կրթական » » Միքայէլ » Մամիկոնեան  
 Դատական » » Սերովբէ » Աղնաւորեան  
 Տնտեսական » » Գարեգին » Մէլիք Առէն-դէր

**ԿՐՕՆԱՅԻՆ ԱՏԵԱՆ**

Գեր. Տ. Կարապետ Եպիսկոպոս Սերովբեան  
 » Տ. Գարեգին Վարդապետ Թաթարեան  
 » Տ. Յակոբ » Փափազեան  
 » Տ. Յովհաննէս Քահանայ Հիւնքեարչէյէնեան  
 » Տ. Սահակ » Տէր Սարգիսեան

**ԲԱՎԱՔԱՅԻՆ ԱՏԵԱՆ**

Աղէքսանդր Էֆէնտի Մէրեէմ—Գուլի  
 Թովմաս » Խօրասանճեան  
 Կարապետ » Շահպաղ  
 Պապի » Պապօեան  
 Սենեքերիմ » Մանուկեան



## ԳՆԲՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

### ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Վաւերացումն նախընթաց շրջանի թԹ. եւ Ի. նիստերու նախնադրութեանց.
2. Բացակայութիւնք .
3. Գաւառներէն եկած կրթական Տեղեկագիրք.
4. Հարցումն առ Ս. Պատրիարքն , Մ. Գափամաճեան էֆէնտի կողմանէ , Ազ-  
գիստաբան Կաթողիկոսական խնդրոյն նկատմամբ .
5. Հարցումն առ Ս. Պատրիարքն , Մ. Գափամաճեան էֆէնտի կողմանէ , Ա.  
մասիոյ Առաջ. Տեղապահ Եղեսեան Եպիսկոպոսի նկատմամբ .
6. Հարցումն առ Ս. Պատրիարքն , Մ. Գափամաճեան էֆէնտի կողմանէ , Ե-  
գիստոսի կալուածական խնդրոյն նկատմամբ .
7. Հարցումն առ կրթ. Խորհրդական էֆէնտի , Ա. Խիստի վարժարանին  
փակման նկատմամբ .
8. Առաջարկ մի քանի Երեսօխոխանաց Մալէզեան պապուելի գերեզմանին վրայ  
չիրիմ կանգնելու համար .
9. Առաջարկ վարչութեան Գաղարային ատենի կազմութիւնն ամբողջելու  
մասին .

### Գաղարունն ատենական գործողութեանց

— 0 —

- Ա. Տեղեկագիրք Երեսօխոխանական նորոգ ընտրութեանց .
- Բ. Հաշուեկշիռ կեդրոնական սնտուկի 1880—81 ամի .

### Հրատարում Ամեն. Պատրիարք Արքազան Հօր Երևանի

Գրատար . . . . .  
 Գրատար . . . . .  
 Գրատար . . . . .  
 Գրատար . . . . .